Եթե ես լինեի ընդդիմության փոխարեն, մի փոքր ավելի շատ ռեսուրս ու ժամանակ կծախսեի՝ կստուգեի բոլոր ընտրատեղամասերն անխտիր: Հայաստանում կան հազարավոր խուլ գյուղեր, որոնք բնակեցված էլ չեն, ես կասկածներ ունեմ, որ այդտեղ էլ են քվեարկել: Պետք է հասկանալ, թե ովքեր են այնտեղ քվեարկել, ինչ պատկեր է ստացվել:

Կարդացեք՝ էջ 4

Գիտեմ, որ Պուտինը ռացիոնալ մարդ է, հենվում է փաստերի եւ փաստարկների վրա՝ ասում է Փաշինյանը: Այդ արտահայտությամբ նկատի ունի այն, որ ինքը Պուտինին կանգնեցրել է փաստի առաջ, եւ այդ փաստն իր գոյությունն է Հայաստանի վարչապետի պաշտոնում, եւ որպես ռացիոնալ մարդ՝ նա պետք է հարմարվի, համակերպվի այդ փաստի հետ:

Կարդացեք՝ էջ 5

Իշխանության 700 հազար երկրպագուներին այդպես էլ հասու չեղավ, չհետաքրքրեց, թե ինչ շահերով են առաջնորդվում ԱՄՆ-ն, Եվրոպան, Թուրքիան ու Ադրբեջանը: Ինչո՞ւ են շահագրգռված այս իշխանության վերարտադրությամբ: Երկրի անվտանգությունը կմնա վտանգված, քանի դեռ ասֆալտն ու թոշակն ընտրողի համար կմնան գերակա շահ:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 95 (4230), 13 հունիս, շաբաթ, 2026

www.hraparak.am



Իշխանական մեր աղբյուրները վստահեցնում են, որ թվացյալ հաղթական տրամադրությունների հակառակ կողմում մտահոգ ՔՊ-ականներն են, որոնք չեն պատկերացնում խորհրդարանում առանց 3/5 մեծամասնության երկրի կառավարումն առաջիկա հինգ տարիներին: Մի կողմից, ընդդիմադիրների ռադիկալ տրամադրություններն են անհանգստություն պատճառում, իսկ երեկ «Բարգավաճ Հայաստանից» հայտարարեցին, որ փողոց դուրս կբերեն մարդկանց, եթե ԿԸՀ-ն վերաքվեարկություն չանցկացնի եւ ԲՀԿ-ին միտումնավոր դուրս թողնի խորհրդարանից: Իսկ մյուս կողմում կառավարման ճգնաժամն է: Իշխող թիմում այս օրերին մի քանի սցենար են քննարկում, թե ինչպես են պատկերացնում առաջիկա տարիներին նման նվազ լեգիտիմությամբ երկրի կառավարումը: Նախ ասում են, որ փորձելու են ԲՀԿ-ի ձայները գողանալու միջոցով 3/5 ունենալ, եթե չստացվի, ապա դիտարկում են «մարդագողության» տարբերակն ընդդիմության շարքերից: Պատրաստվում են նոր գեղամնազարյանների հայտնաբերել ու իրենց ճամբար տանել՝ դրա «ձեւերը» լավ գիտեն: Մի ծայրահեղ սցենար էլ են քննարկում՝ Փաշինյանը կգլխատի, բանտ կնետի, կհալածի արմատական ընդդիմությանը, «կջարդի» ուժեղ ընդդիմության ողնաշարը եւ որոշ ժամանակ անց թույլիկ, իր կողմից կառավարելի ընդդիմադիրների հետ արտահերթ ընտրությունների կգնա՝ ապահովելով ոչ թե 65, այլ 75 տոկոս, որը թույլ կտա կատարել Ալիեւի տնային առաջադրանքները եւ հատկապես՝ Սահմանադրություն փոխելը:

Այն ընտրատեղամասերի հանձնաժողովների անդամները, որտեղ ընտրությունների արդյունքները չեղյալ են հայտարարվել, ըստ օրենքի՝ աշխատավարձ չեն ստանալու: Այս փաստը, մեր տեղեկություններով, ծանր են տարել մինչեւ գիշերվա հազարն աշխատած հանձնաժողովականները, սակայն առավել հուզված են այն փաստից, որ բավական չէ ձրի աշխատել են՝ բոլորից ավել ժամաքանակով, դրա հետ մեկտեղ էլ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել, որ չեն կանխել ընտրախախտումները: Մեղրիի 35/65 տեղամասի հանձնաժողովականներին, մինչդեռ, մեր աղբյուրների փոխանցմամբ, ԿԸՀ-ից համաձայնություն են տվել, որ կարող են թույլատրել զինվորականների քվեարկությունը՝ 20:00-ից հետո:

Պայքարը քրեականացրել է

Մենք կանխատեսում էինք, որ ընտրություններից անմիջապես հետո այլախոհների, ընդդիմության նկատմամբ նոր հալածանքներ են սկսվելու՝ այդ մասին Նիկոլ Փաշինյանն անոնսել էր նախընտրական փուլում, խոսել է ընտրության եւ հաջորդ օրերին: Կոնկրետ անուններ է հնչեցրել, պատժաչափեր սահմանել, մեղադրել դատական համակարգին՝ կոռումպացվածության մեջ, եւ հայտարարել է, որ բոլորը նստելու են՝ եւ ընդդիմադիրները, եւ ընտրակաշառքի համար մեղադրվողները, եւ իր հրահանգները չկատարող դատավորները, որովհետեւ... ինքը հոգնել է այդ վիճակից: Ամեն մի նման հայտարարությունից հետո Քննչական կոմիտեն, դատախազությունն ու հակակոռուպցիոնն ուղղակի ցայտնոտի մեջ են ընկնում՝ սկսում են նոր, մեկը մյուսից անհեթեթ ու անհիմն գործեր հարուցել, անօրինական քայլեր կատարել: Երեկ միանգամից երկու նման փաստի մասին իմացանք: Մեկը վերաբերում է «Ուժեղ Հայաստանի» ցուցակի առաջին համար Նարեկ Կարապետյանին, որը փորձել էր հատել հայ-վրացական սահմանը եւ պարզել էր, որ իր ՍԷԿՏ-ը փակ է: Թե ինչպես կարող է մարդու նկատմամբ վարույթ հարուցվել եւ նրա ելքը փակվել՝ առանց նրան տեղյակ պահելու, դժվար եմ պատկերացնում: Երկրորդ փաստը վերաբերում է երկու հանրային գործիչների՝ քաղաքագետ Ալեն Ղեւոնդյանին եւ ՀՀԿ անդամ Տիգրան Վարդանյանին: Ըստ մեղադրանքի, «Տ. Վ.-ն եւ Ա. Ղ.-ն ֆեյսբուքյան իրենց օգտահաշիվներում իշխանությունը զավթելուն եւ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր են կատարել»: Փաստ է, որ հանրահավաքային պայքարի յուրաքանչյուր կոչ արդեն այս իշխանությունը հանցանք է համարում: Փողոցներ փակելով իշխանության եկած Փաշինյանը որոշել է, որ ով փողոց դուրս գա, ով հանրահավաքներ անելու կոչեր անի, սահմանադրական կարգն է տապալում, ուրեմն պետք է «նստի»:

Տարածված կարծիք կար, թե Ռուսաստանից ժամանած ՀՀ քաղաքացիները, որոնք եկել էին հունիսի 7-ի ընտրություններին մասնակցելու, ուղարկվել են կամ Ռուսաստանի իշխանությունների կողմից, կամ եկել են ընդդիմության ջանքերով եւ նրան ընտրելու համար: Նոյեմբերյան համայնքում ՌԴ-ից ժամանած առնվազն 3 անձ, որոնց հետ մենք զրուցեցինք, Նիկոլ Փաշինյանի, ՔՊ-ի համակիրներ էին: Նրանցից մեկը Ոսկեպար գյուղից էր, նախկին զինվորական բարձր պաշտոնյա: Մյուսը Բերդ քաղաքից էր, երրորդը՝ Բերդ համայնքի Մովսես գյուղից, որոնք հատուկ Ռուսաստանից ժամանել էին Հայաստան եւ ՔՊ-ի օգտին քվեարկել:

ԿԸՆԴՈՒՆԻ, ԲԱՅՑ ՉԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԻ

Դիվանագիտական աղբյուրները չեն բացառում, որ Ռուսաստանը չճանաչի Հայաստանում հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքները: Մինչ այս պահը պաշտոնական Կրեմլից Փաշինյանին չեն շնորհավորել, ի տարբերություն արեւմտյան մի շարք երկրների առաջնորդների, որոնք, ընտրությունների արձանագրությունների թանաքը դեռ չչորացած, հանդես եկան շնորհավորական ուղերձներով: Մոսկվայից նաեւ տարբեր գնահատականներ հնչեցին ընտրական խախտումների վերաբերյալ: Սակայն մեր աղբյուրն ասում է, որ ՌԴ իշխանությունը գուցե ընդունի ընտրությունների արդյունքներն ի գիտություն, առանց շնորհավորանքների, որով էլ իր վերաբերմունքը կդրսեւորի Փաշինյանի հակառուսական քաղաքականության նկատմամբ: Ուշագրավ է, որ երեկ Փաշինյանը ջերմ շնորհավորական ուղերձ էր հղել ՌԴ նախագահին՝ Ռուսաստանի օրվա կապակցությամբ: «Վստահ եմ, որ նախնիների աշխատանքային ձեռքբերումներն ու ռազմական սխրանքները, նրանց տոկունությունն ու անձնվիրությունը՝ հանուն հայրենիքի փառքի, միշտ վառ եւ ոգեշնչող օրինակ կծառայեն ինչպես մեզ, այնպես էլ ապագա սերունդներին»,- իր ուղերձում նշել է նա: Ակնհայտ է, որ Փաշինյանն ամեն ինչ անելու է, որ հարթի տարաձայնությունները եւ վերականգնի հարաբերությունները՝ գոնե տնտեսապես չտուժելու համար: Բայց թե ինչպես կպահի իրեն ՌԴ նախագահը, դժվար է ասել:

ԱՐՑԱԽ

Արցախ միությունը՝ Արցախի ՄԻՊ-ի եւ Միջազգային ու համեմատական իրավունքի կենտրոնի հետ համագործակցությամբ, ընդունում է դիմումներ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացնելու համար: Դիմումները վերաբերում են արցախցիների գույքային պահանջներին՝ Ադրբեջանի կողմից Արցախի բնակիչների սեփականության (բնակարան, տուն, հողամաս եւ այլն) բռնազավթման հիմքով, որը փոխկապակցված է վերադարձի եւ այլ իրավունքների հետ: Թեմայի վերաբերյալ զրուցել ենք ԱՀ պետական նախարար, Արցախի նախկին ՄԻՊ **Արտակ Բեգլարյանի** հետ:

- Դիմումների ընդունման նոր փուլից ի՞նչ ակնկալիք ունեք, ձեր միջոցով քանի՞արցախցի է դիմում ներկայացրել ՄԻԵԴ:

- Նոր փուլով արդեն մի քանի հարյուր նոր հայտ ստացել ենք, ու թիվն աճում է: Նպատակն այն է, որ գործընկերների հետ միասին կարողանանք օգնել մարդկանց՝ իրենց անունից դիմենք ՄԻԵԴ, չեմ բացառում, որ նաեւ դիմենք ՄԱԿ-ի մարդու իրավունքների մշակել ենք: Տասնյակ կամավորներ են ներգրավված, հիմնականում՝ ուսանողներ:

- Կարո՞ղ ենք արձանագրել, որ պետության գործառույթը ձեր թիմը վերցրել է իր ուսերին, քանի որ սեփական ժողովրդի իրավունքների պաշտպանությունը պետության կարեւոր գործառույթներից է:

- Ցանկությունն ունենք, քանի որ Հայաստանի Հանրապետությունը դա չի անում եւ շուտով ավելի վատ բաներ կանի, այսինքն՝ միջազգային դատարաններից հայցերը հետ կվերցնի: Մենք փորձում ենք՝ ինչքան հնարավոր է, պետության ստեղծած բացերը լրացնել, բայց չենք կարող պետության ամբողջ բեռը մեր վրա վերցնել եւ ռեսուրսների տեսանկյունից, որ խիստ սղություն ունենք, եւ իրավասությունների տեսանկյունից: Պետական մեխանիզմները՝ իրավական, քաղաքական, դիվանագիտական առումով, շատ ավելի մեծ են, քան հասարակական կազմակերպությունների կամ գործիչների հնարավորությունները, բայց ես լիահույս եմ, որ մենք կկարողանանք մի օր հազարավոր դիմումներ դատարան: Ցավոք, մարդկային ռեսուրսի եւ դրա հետ կապված նյութական ռեսուրսի լուրջ սղություն ունենք: Եթե ունենայինք ֆինանսական ռեսուրսներ, կկարողանայինք վճարովի հիմունքներով մասնագետներ ներգրավել եւ միանգամից մեծ ծավալ ապահովել, բայց անցած տարվա սկզբից ի վեր տարբեր փուլերով մի քանի գործընկեր կազմակերպությունների փոքր նվիրատվությունների շնորհիվ կարողացել ենք մի քանի իրավաբանի ֆինանսավորել, որպեսզի հիմնական աշխատանք կատարեն, մնացածը մենք մեր ուժերով ու կամավոր հիմունքներով այդ աշխատանքները համակարգել ենք, փաստաթղթերը հասցնել միջազգային դատարաններ: Իհարկե, սրանով չենք կարող բոլորի իրավունքների պաշտպանության ուղղությամբ միջազգային մեխանիզմները կիրառել, բայց առնվազն կարող ենք կրիտիկական զանգված ապահովել միջազգային դատարաններում, պատշաճ ընթացակարգեր եւ ուշադրություն ստանալ ու վաղ թե ուշ ստանալ համապատասխան նախադեպային որոշումներ, որն արդեն կարելի կլինի իրավաքաղաքական տեսանկյունից տարածել մյուս բոլոր արցախցիների վրա: Արդյունքում՝ նախ թեման կմնա բաց, եւ երկրորդը՝ շարունակական ճնշում կգեներացվի Ադրբեջանի վրա՝ որոշակի կանխարգելիչ ազդեցություն նաեւ: Բայց, խոշոր հաշվով, ռազմավարության տեսանկյունից մենք 10-15 տարի հետոյի համար ենք սա անում, էնպես չէ, որ շատ արագ արդյունք ենք ստանալու:

- Ադրբեջանն էլ է Արցախի համար ֆինանսական պահանջներ ներկայացնում, մատնանշում են իբր իրենց հանքերը մեր կողմից օգտագործելու հանգամանքը: Այս մասով Ադրբեջանը միջազգային դատարաններում հաջողության հասնելու ինչպիսի՞ շանսեր ունի:

- Չեն կարող էական հաջողության հասնել, իհարկե, Փաշինյանի հետ դաշնակցաբար փորձելու են լիքը բան անել, բայց այս տեսանկյունից իրավական առումով մեր դիրքերն անհամեմատ ավելի ուժեղ են, քան ադրբեջանական դիրքերը: Նաեւ այդ պատճառով է, որ Ալիեւի ռեժիմն ամեն ինչ անում է, որպեսզի Փաշինյանի իշխանությունը հետ վերցնի միջազգային գանգատները, որովհետեւ շատ լավ գիտեն, որ միջազգային բոլոր գանգատներում պարտվելու են, իսկ իրենց գանգատները Հայաստանի դեմ որեւէ հաջողության չեն հասնելու:

- Միջազգային հարթակներում Ադրբեջանի պարտվելն ի՞նչ կտա մեզ:

- Այս իրավիճակում, ներկա հանգամանքներում՝ ոչինչ, բացի բարոյական-իրավական հաջողությունից, բայց մենք պատրաստվում ենք ապագային եւ չգիտենք, թե ապագան ինչպես է լինելու: Դա նշանակում է, որ մենք ռազմավարական ներդրում ենք անում մեր երկարաժամկետ պայքարի մեջ՝ հավատալով, որ ավելի բարենպաստ պայմաններ կունենանք ապագայում: Իհարկե, դա չի նշանակում, որ միայն իրավական մեխանիզմների կիրառումը կապահովի արդյունք: Գլխավոր ճանապարհը Հայաստանի հզորացումն ու ազգայնացումն է, որ մի օր Հայաստանը նախ վերաստանձնի պատասխանատվություն՝ Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության ու վերականգնման համար, երկրորդը՝ ՀՀ-ն ունենա բավարար կարողություններ՝ բացի իրավական ճակատից, մնացած բոլոր ճակատներում դրա համար արդյունավետ պայքարելու, հաջողության հասնելու: Եվ երրորդը, որ մեր կամքից անկախ է՝ տարածաշրջանում ու աշխարհում ունենանք ավելի բարենպաստ միջավայր ու ավելի արդար աշխարհակարգ:

- Ինչպե՞ս եք վերաբերվում նրան, որ արցախցիներին դուրս թողեցին Հայաստանում ընտրելու պրոցեսից:

- Միանշանակ է, որ արցախցիները ՀՀ քաղաքացի են, այդ թվում՝ 070 կոդով անձնագրով, եւ միանշանակ է, որ կառավարության 2023-ի հոկտեմբերի որոշումը հակասահմանադրական է, որով մեզ զրկել են քաղաքացիության իրավունքի իրացման հնարավորություններից ու մեխանիզմներից: Կարծում եմ՝ Փաշինյանի՝ նման որոշում կայացնելու մոտիվացիաներից մեկը ներքաղաքականն է, որ արցախցիներն ընտրությանը մասնակցելու հնարավորություն չունենան, քանի որ արցախցիների ճնշող մեծամասնությունը պոտենցիալ ընդդիմադիր կուսակցություններին ընտրողներ են եւ Փաշինյանին ընդգծված դեմ են: Արցախցիներից շատ փոքր տոկոս կարող եք գտնել, որ Փաշինյանին կողմ է: Այս համատեքստում կարելի է դիտարկել նաեւ արցախցիների՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումների ձգձգումը: Այսպես արեցին, որպեսզի արցախցիները չկարողանան ընտրելու իրավունքն իրացնել: Նույնիսկ այս ընտրություններից առաջ կային որոշումներ, որ դատարանն արձանագրել է, որ 070 կոդով անձնագիր ունեցող արցախցին ՀՀ քաղաքացի է եւ ընտրելու իրավունք ունի, կառավարությունը, ի դեմս ՆԳՆ-ի, ճնշեց, որ շատ ապօրինի որոշում կայացրեց Վերաքննիչ դատարանը՝ բեկանելով առաջին ատյանի դատարանի որոշումը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՆԳՆ-Ի, ՃՆՇԵՑ, ՈՒ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ՇԱՏ ԱՊՕՐԻՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՐԵՑ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԳՈՒՄԱՐԸ ՓՈԽԱՆՑՎԵԼ Է ՊԵՏԲՅՈՒՋԵ, ԱՅՆ ՈՉ ՈՔ ՉԻ ՅՈՒՐԱՑՐԵԼ, ԲԱՅՑ ԱՇՈՏՅԱՆԸ ՆՍՏԱԾ Է

Ընտրություններից ժամեր առաջ իրավապահները ձերբակալեցին ԿԳ նախկին նախարար Արմեն Աշոտյանին: Դատարանը Աշոտյանին կալանավորեց մեկ ամսով: Քրեական հետապնդում է հարուցվել Աշոտյանի, ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի, նրա որդու, Բրյուսովի անվան համալսարանի նախկին ռեկտոր Գայանե Գասպարյանի ու եւս 3 անձի նկատմամբ: Ըստ ՔԿ-ի՝ խոսքը Բրյուսովի համալսարանին պատկանած անշարժ գույքի օտարման մասին է: ՔԿ պնդմամբ՝ 2009-2016 թթ. Արմեն Աշոտյանը, մի խումբ անձանց հետ, «պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ», եւ պետության սեփականությունից դուրս են բերվել Երեւանի Պուշկինի 38/1 հասցեում գտնվող 451 քմ մակերեսով անշարժ գույքն ու հողամասը: Գույքի արժեքը գնահատվում է 208 միլիոն դրամ: Ըստ հաղորդագրության՝ այն հետագայում փոխանցվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ նրա հետ փոխկապակցված անձին, եւ «գույքի ծագումը թաքցնելու նպատակով այն նախ ձեւակերպվել է մեկ այլ անձի անունով, ապա 75 միլիոն դրամով գնվել եւ գրանցվել է Գագիկ Խաչատրյանի որդու անվամբ»: Քրեական հետապնդումը հարուցվել է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, դրան օժանդակելու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման հոդվածներով: «Հրապարակը» մի քանի հարց է ուղղել Արմեն Աշոտյանի փաստաբան **Տիգրան Աթանեսյանին**:

- Իրավապահները պնդում են, որ տեղի ունեցածը փողերի լվացում է, ինչո՞ւ հենց փողերի լվացում, ի՞նչ փողերի լվացման մասին է խոսքը:

- Իրականում, փողերի լվացման հոդվածը վաղեմության ժամկետի համար են ասպարեզ բերել: Կալանքի նիստի ժամանակ քննիչին հարց ուղղեցինք՝ ո՞ր փողն է եղել կեղտոտ կամ ո՞ր տարածքը, առհասարակ՝ ի՞նչն է լվացվել: Սակայն քննիչը մեր հարցին այդպես էլ չպատասխանեց, հավանաբար՝ չուներ պատասխան: Տարածքը, որն իրացվել է, եղել է պետական տարածք, պատկանել է Բրյուսովի անվան համալսարանին եւ գնահատված արժեքից գնահատվել է 20-30 տոկոսով բարձր, անգամ նախաքննության ընթացքում կատարված փորձաքննությունն է դա հաստատել: Իսկ որ ամենակարեւորն է՝ այդ գումարը փոխանցվել է պետական բյուջե, այն ոչ ոք չի յուրացրել: Սեփականատերը ձեռներեց է, ոչ մի կապ չունի որեւէ ուժի հետ, մարդն ուղղակի իր գումարով որոշել է տարածք գնել, եթե այդտեղ գտնեք որեւէ հանցակազմի տարր, ապա խնդրում եմ՝ ինձ օգնեք, քանի որ ես երկար փնտրեցի, բայց այդպես էլ չգտա:

- Պուշկինի 38/1 հասցեում գտնվող 451 քմ տարածքն ի՞նչ տարածք է, բուհն ի՞նչ նպատակներով է այն օգտագործել:

- Ես այդ տարածքում չեմ եղել, սակայն գիտեմ, որ Բրյուսովին հատկացրած ինչ-որ մի անշարժ գույք են քանդել, նորակառույց շենքում դրա փոխարեն այլ տարածք են տրամադրել:

- ՔԿ-ն պնդում է, որ 208 միլիոն դրամի վնաս է հասցվել:

- Քիչ են նշել, վաճառվել է որոշակի ավելի բարձր գնով, ես չեմ կարող հիմա կոնկրետ թիվ ասել: Ամեն դեպքում, ես կարող եմ մի բան ասել՝ նպատակը եղել է Արմեն Աշոտյանին պատժելը, նրան կալանավորելը, բայց քանի որ ձեռքների տակ չի եղել այլ գործ, որոշել են սա գործի դնել: Անգամ ինձ թվում է՝ չեն էլ նայել, թե գործն ինչի մասին է: Կամ առհասարակ՝ այս գործով հնարավո՞ր է անձին տանել կալանքի, թե՞ ոչ: Այս գործը քննվել է 2019 թվականին: Դրա շրջանակներում մեծ ցուցմունք են վերցրել՝ բավականին մանրամասն, բայց անգամ մոռացել էի այս գործի մասին, քանի որ սովորական գործընթաց էր, նման գործընթացներ օրը մի քանի անգամ լինում են:

- Իսկ Գագիկ Խաչատրյանի որդու մեղքը ո՞րն է:

- Նա սեփականատերն է, բայց ոչ թե նա է սկզբում գնել, այլ՝ ուրիշ մեկը եւ հետո նոր վաճառել է Գ. Խաչատրյանի որդուն: Այստեղ ոչ մի խնդիր չկա: Մասնավոր անձ է, գնել է ինչ-որ մեկից, ո՞րն է խնդիրը: Այս գործի շրջանակներում բացարձակ չկար անհրաժեշտություն՝ Արմեն Աշոտյանին կալանքի տանելու, նա ո՞չ հեռանալու էր երկրից, ո՞չ խոչընդոտելու էր գործին, ումի՞ց պետք է Աշոտյանը փախչեր կամ ո՞ւմ վրա ազդեր, աբսուրդ է: Մարդը յոթ տարի շարունակ գիտեր այս գործի մասին, կան մանրամասն ներկայացված ցուցմունքներ: Եթե այս յոթ տարվա ընթացքում ոչ մեկի վրա չի ազդել, հիմա ինչո՞ւ պետք է ազդեր:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՊՀ

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆՆ Է ՀՐԱՀԱՆԳԵԼ՝ ԼՈՒԾԱՐԵԼ ԱՄԲԻՈՆԸ

Հինգշաբթի օրը ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Անուշ Սեդրակյանը «Հրապարակի»-ին հայտնել էր, որ ռեկտորատից ԵՊՀ Եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատարին տեղեկացրել են, որ մայր բուհի Արտասահմանյան գրականության ամբիոնը, որը ԵՊՀ ամենահին ու կարեւոր ամբիոններից է, լուծարվում է: Պատճառը հավանաբար այն է, որ ամբիոնի վարիչ՝ քաղաքագետ Անուշ Սեդրակյանը մասնակցում էր ընտրություններին «Միասնության թեւեր» կուսակցության ցուցակով: Ամիսներ առաջ էլ աշխատանքից ազատել էին ԵՊՀ Եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի դեկան Գեւորգ Բարսեղյանին՝ ընդդիմադիր քաղաքական հայացքների պատճառով: ԵՊՀ-ն այն աստիճան է ՔՊ-ականացվել, որ բոլոր այլախոհներին վտարում են բուհից:

Նիկոլ Փաշինյանի իշխանավարման 8 տարիներին տարբեր բուհերից, այդ թվում՝ ԵՊՀ-ից, բազմաթիվ դեկաններ եւ դասախոսներ են հեռացվել՝ իշխանությանը քննադատելու կամ սեփական կարծիք ունենալու համար: Անուշ Սեդրակյանը մեզ փոխանցեց, որ ԵՊՀ գիտական խորհուրդն արդեն որոշել է Արտասահմանյան գրականության ամբիոնը լուծարելու առաջարկությամբ դիմել համալսարանի հոգաբարձուների խորհրդին: Սեդրակյանը նշում է, որ եթե ամբիոնը լուծարվի, դիմելու է դատարան:

ԵՊՀ-ի մեր աղբյուրն ասում է, որ այս որոշումը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանի անձնական որոշումն է: Արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոսների մի մասին ասվել է, որ կշարունակեն աշխատել Հայ բանասիրության ֆակուլտետում, մյուս մասը՝ Անգլիական բանասիրության ամբիոնում: ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ **Անահիտ Եգանյանը** մեզ հետ զրույցում նշեց, որ ամբիոնի լուծարումը ոչ միայն հարված է կրթական համակարգին եւ ուսանողներին, այլեւ այդ ամբիոնում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային իրավունքների կոնկրետ ոտնահարում է, քանզի օրենքն ասում է, որ նախ պետք է ամբիոնի աշխատակիցներին ծանուցել այդ որոշման մասին, հետո նոր միայն հարցը դնել քննարկման:

«Ես որեւէ նման ծանուցում չեմ ստացել, ինչը պնդում եմ՝ ամրագրված է օրենքում: Չի կարելի որոշումը կայացնել, հետո նոր միայն ծանուցել դրա մասին: Թեպետ մինչ այս պահն էլ մենք որեւէ ծանուցում չենք ստացել: Ստուգել եմ իմ էլեկտրոնային հասցեն: Մինչդեռ աշխատանքի ընդունելիս օրենքը մեզ լրիվ այլ բան է ասում՝ այս ամենի ճիշտ հակառակը: Սուրհանդակ են ուղարկում տիկին Անուշ Սեդրակյանին, եւ նոր միայն ամբիոնի կազմը տեղեկանում է այդ մասին, ինչպե՞ս կարելի է: Մենք այսպե՞ս ենք գնում դեպի Արեւմուտք, այսպե՞ս է Երեւանի պետական համալսարանը փորձում միջազգային բուհի ստատուս ձեռք բերել: Ես՝ որպես այդ ամբիոնի դոցենտ, պնդում եմ, որ խախտվել են իմ իրավունքները թե՛ Աշխատանքային օրենսգրքի առումով, թե՛ բուհի կորպորատիվ էթիկայի: Մեր մտայնությունն այն չէ, որ գործազուրկ ենք մնալու, ոչ, պարզապես այս միավորը՝ Արտասահմանյան գրականության ամբիոնը, պետք է մնա մայր բուհում: Ութ հոգանոց ամբիոն է՝ 120 աշխատող չկա մեր ամբիոնում, կարելի էր, չէ՞, կորպորատիվ էթիկան գոնե պահպանել: Ամբիոնն ունի մագիստրոսական ծրագիր, ունենք ուսանողներ, ի՞նչ ճակատագրի են արժանանալու այդ ուսանողները: Միջազգային բուհերի ցանկ կա, կարո՞ղ եք ինձ ասել, թե որ առաջատար բուհում կարող են այսպես վարվել ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Կան բարեվարքության կանոններ: Դրանցից ոչ մեկը, փաստորեն, չի պահպանվել: Միջազգային համալսարանների կանոնակարգերն ասում են, որ բուհի ղեկավարները՝ անկախ սեռից, ռասայից ու ամեն ինչից, պարտավոր են համագործակցել իրենց աշխատակիցների հետ, իսկ դա ենթադրում է կորպորատիվ էթիկա, ինչը ես չեմ տեսնում: Հունիսի 11-ին է այդ ամենը տեղի ունեցել: Ցանկացած բուհում բեռնվածությունը նախապես արդեն գիտեն աշխատակիցները, արդյոք կարելի՞ էր ամռանը մարդկանց նման փաստի առաջ կանգնեցնել: Գուցե ես չեմ հարմարվում այն պայմաններին, որոնք ինձ առաջարկելու է ԵՊՀ ղեկավարությունը, եւ հեռանում եմ բուհից, ի՞նչ պետք է անեմ: Իսկ նրանց առաջարկն ամբիոնի կազմալուծումն է, քանի որ չունենք բավարար ժամաքանակ, եւ ժամերի բաշխվածությունը կանոնակարգի հետ հակասության մեջ է: Ի դեպ, ժամաքանակի քիչ լինելը պայմանավորված չէ նրանով, որ մենք քիչ ուսանող ունենք՝ ոչ, ուղղակի պարբերաբար ուսումնական ծրագրերից կրճատում են «Արտասահմանյան գրականություն» առարկան: Ասում են, որ ուսանողին գրականություն, այն էլ՝ արտասահմանյան գրականություն, առհասարակ պետք չէ: Այդ դեպքում ի՞նչ է պետք բուհական ծրագրին: Ես իմ ուսանողներին հաճախ եմ ասում՝ եթե ուղղակի ուզում եք լեզուներ սովորել, կարող եք ինչ-որ ուսումնական կենտրոնում մի քանի ամսում սովորել, ինչո՞ւ եք 800 հազար եւ ավելի դրամ վճարում համալսարանին, եթե ձեզ միայն լեզու է հարկավոր: Համալսարանի ղեկավարությունը գնում է այս ճանապարհով: Բուհական կրթությունը փորձում է դարձնել սովորական դասընթաց, որտեղ չկա փիլիսոփայություն, չկա լեզվաբանագիտություն, չկա գրականություն, եւ այսպես շարունակ»:

Ամբիոնի երկարամյա նախկին դասախոս, գրող Հենրիկ Էդոյանն էլ մեզ հետ զրույցում ասում է. «Շատ վատ, սխալ որոշում է: Նոր եմ իմացել լուրը, համալսարանը չի կարող առանց այս ամբիոնի գոյատեւել: Ո՞նց կարելի է նման որոշում կայացնել: Արտասահմանյան գրականությունը մի շարք ֆակուլտետներում մասնագիտական առարկա է, ստացվում է, որ էլ չե՞ն կարդալու գրականություն: Չեմ էլ պատկերացնում, թե ինչպես են այլ ամբիոնի միացնելու, օրինակ՝ հայ գրականության հետ ի՞նչ կապ ունի արտասահմանյան գրականությունը կամ՝ ռուս գրականության հետ: Համալսարանի հիմնադրման օրվանից գործում է այդ ամբիոնը եւ պետք է շարունակի գործել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԵՐՋԻՆ 1 ՏԱՐՈՒՄ ՇԻԿԱՀՈՂՈՒՄ ՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԵՆ ԵՎ ՉԵՆ ԴԱԴԱՐԵԼ

Օրեր առաջ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Էդվարդ Ասրյանը խոսել էր Ադրբեջանի կողմից Սյունիքի մարզի Շիկահողի արգելոցում ծառեր հատելու մասին: Խոսքը Ներքին Հանդ գյուղի մոտ գտնվող տարածքի մասին է: Այստեղ նրանք ադրբեջանական դիրքեր ու ճանապարհներ են կառուցում, ամրաշինական աշխատանքներ անում, եւ մոտ 60 հա անտառ է հատվել: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը խուսափում է «հատում» բառն օգտագործելուց, ասում է. «Արգելոցի անտառային էկոհամակարգերը սահմանամերձ որոշ շրջաններում որոշակի վնասներ են կրել 2021 թվականի ռազմական հակամարտության հետեւանքով»:

Հունիսի 12-ին ԱԺ-ում շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանը հարցին՝ Հայաստանը դիմո՞ւմ է Ադրբեջանին՝ պահանջով, որ արգելոցի տարածքում դադարեցնեն ծառահատումները, ասել է. «2021-ին մենք սահմանամերձ հատվածներում ունեցել ենք արգելոցի էկոհամակարգի խաթարում: Ես տեղեկացված եմ, որ այդ ժամանակահատվածում փորձ է եղել 2 կողմից ուսումնասիրել վնասները, բայց քանի որ այս պահին ունեցած իրավիճակը մեզ հնարավորություն չի տալիս ավելի խոր ուսումնասիրություն, վնասի գնահատում իրականացնել, այդ հարցն առկախվել է այլ շատ կարեւոր հարցի պատճառով՝ սահմանազատման աշխատանքների իրականացման համար»:

Եվ նախարարը, փոխանակ խոսի բնապահպանական հարցերի, մեր տարածքում թշնամու ապօրինությունների մասին, կարեւորել է խաղաղության օրակարգը. «Ես վստահ եմ, որ երբ դե ֆակտո խաղաղությունը հաստատվի դե յուրե, եւ մենք ամբողջությամբ ունենանք սահմանազատված սահմաններ մեր հարեւանների հետ, այդ ժամանակ այն միջազգային հարթակներում, որտեղ ես հանդես եմ գալիս որպես COP նախագահ, նաեւ այդ հնարավորությունը կօգտագործեմ, որպեսզի գործընկերների հետ սկսենք աշխատել, քննարկել, առաջարկություններով հանդես գալ, որպեսզի, օրինակ, անդրսահմանային հատվածներում իրականացնենք միասնական բնապահպանական ծրագրեր»:

Բնապահպանական ոլորտի փորձագետ Այսեր Ղազարյանը, խնդրի հետ կապված, գրել է. «ՀՀ ԶՈՒ ԳՇ պետն ի վերջո բարեհաճեց անդրադառնալ Շիկահողի արգելոցում Ադրբեջանի կողմից իրականացվող ապօրինի ծառահատումներին: Սակայն հարց է առաջանում՝ որտե՞ղ են մյուս պատկան մարմինները, եւ ինչո՞ւ է այս հարցը մնում միայն ռազմական գերատեսչության լոկալ մեկնաբանությունների տիրույթում: Ի վերջո, COP 17 միջազգային համաժողով պետք է տեղի ունենա ՀՀ-ում»:

Մեզ հետ զրույցում **Այսեր Ղազարյանն** ասաց, որ արդեն 4 տարի է՝ ինքը հանրայնացնում է Շիկահողի արգելոցի տարածքում առկա անվտանգային եւ բնապահպանական խնդիրները. «Ադրբեջանական զինված ուժերի ներխուժման հետեւանքով Շիկահողի արգելոցի որոշ տեղամասեր հայտնվել են թշնամու ուղիղ կրակային եւ վիզուալ վերահսկողության տակ: Մասնավորապես՝ մոտ 3.4 հա տարածքի հիմնական մասն օկուպացված է, որոշ մասն էլ գտնվում է հակառակորդի սովորական զինատեսակների ուղիղ կրակային հասանելիության գոտում: Մոտ 6-7 հա տարածք դիտարկվում է որպես ուղիղ դիտարկվող ականանետային հասանելիության գոտի: Թշնամու կողմից զավթված արգելոցի տարածքում կառուցված են գրունտային ճանապարհներ, դիրքեր, խրամատներ, հենակետեր: ՀՀ ՇՄ նախարարության համապատասխան ստորաբաժանումները փաստացի զրկված են տվյալ օկուպացված եւ վտանգավոր գոտիների տարածքներում բնապահպանական գործառույթների իրականացման եւ գործունեություն ծավալելու հնարավորություններից: Հետեւաբար, նախարարության կողմից շրջանառվող պահպանության, կենսաբազմազանության մոնիտորինգի եւ մյուս գործառույթներն ու ընթացիկ գործընթացները պետական լիազորված մարմնի կողմից իմիտացիոն բնույթ են կրում (անիմաստ վատնվում են պետական բյուջեի եւ միջազգային որոշ ծրագրերի միջոցները): Անհրաժեշտ է վերանայել պետական քաղաքականությունը՝ հաշվի առնելով տեղանքի ռազմաքաղաքական իրողությունները: Բացի այն, որ թշնամին արգելոցի տարածքում կառուցել է գրունտային ճանապարհների ցանց, դիրքեր եւ ամրաշինական կառույցներ, շարունակվում է արժեքավոր հաստաբուն ծառերի համատարած հատումը: Արբանյակային վերջին դիտարկումների արդյունքներով ներկայացրել եմ, որ ընդհանուր մոտ 60 հեկտար անտառածածկ տարածք արդեն իսկ ոչնչացվել է 2025-ի դրությամբ: Ցավոք, վերջին մեկ տարվա ժամանակագրական պատկերը հաստատում է, որ հատումները կրում են պարբերական բնույթ եւ չեն դադարում: Սա ոչ միայն տարածքային ամբողջականության խնդիր է, այլեւ իրական էկոցիդ Հայաստանի եզակի բնական արժեքների նկատմամբ: Լսել եմ, որ ասում են՝ սահմանային ճշտումներից հետո ամեն ինչ հստակ կարվի. դա մանիպուլյացիա է: Տվյալ սահմանը Սովետական Միության ժամանակ էլ՝ իրենց ասած այդ ռազմական քարտեզներով, պատկանել է Հայաստանին: Քանի որ ջրբաժանը սարերի գագաթային մասերով է տարված, մեծ հաշվով, այդտեղ որեւէ փոփոխություն տեղի չի ունենալու իրենց ասած սահմանազատման արդյունքում»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018-ԻՆ ՔԱՐՈԶՈՒՄ ԷՐ ԳԱԼ ՈՒ ԻՐ ՕԳՏԻՆ ՔՎԵԱՐԿԵԼ, 2026-ԻՆ ՊԱՐԶՎԵՑ՝ ԴԱ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է

*«Հրապարակի» հարցերին պատասխանում է ադրբեջանագետ **Արմինե Ադիբեկյանը**:*

- Խորհրդարանական ընտրություններում արձանագրվեցին աննախադեպ թվով խախտումներ, ոմանց կարծիքով՝ 90-ականների պատկերն է վերադարձել: Փաշինյանը կեղծված ընտրություններով վերարտադրվեց, սակայն չունի բացարձակ մեծամասնություն եւ մի շարք կարեւոր որոշումներ միայն ՔՊ-ական ուսապարկերի կոճակ սեղմելով չի կարողանալու կայացնել, եթե ընդդիմադիրները վերցնեն իրենց մանդատները: ԲՀԿ-ն էլ կարծես ստացել է պահանջված 4 տոկոսը եւ անցնում է խորհրդարան: Ինչ կարծիքի եք այս պրոցեսների մասին:

- Ինձ համար սպասելի էր, որ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ դավաճանելու է թե՛ օրենքներին, թե՛ իր հնչեցրած սկզբունքներին, քանի որ նա առաջին անգամը չէ, որ հենց այդպես է վարվում: Ինձ այս ամենը անգամ չզարմացրեց: Սահմանամերձ գյուղերում հավաքեցին տարբեր զինծառայողների եւ այդպես փորձեցին տպավորություն ստեղծել, որ անգամ սահմանամերձ գյուղերում մարդիկ վստահում են իրեն: Դա միայն բավական է, որ ասենք՝ այս ընտրությունները եւս կեղծվել են: Էլ չենք խոսում ձայների սխալ հաշվարկի մասին, սրանք այն փաստերն են, որոնք մակերեսի վրա են, պատկերացնել կարելի է, թե դեռ որքան չբացահայտված գործողություններ կան: Եթե ես լինեի ընդդիմության փոխարեն, մի փոքր ավելի շատ ռեսուրս ու ժամանակ կծախսեի եւ կստուգեի բոլոր ընտրատեղամասերն անխտիր: Հայաստանում կան հազարավոր խուլ գյուղեր, որոնք, ի դեպ, բնակեցված էլ չեն, լքված գյուղեր են, ես կասկածներ ունեմ, որ այդ լքված գյուղերում էլ են քվեարկել: Պետք է հասկանալ, թե ովքեր են այնտեղ քվեարկել, եւ ինչ պատկեր է ստացվել: Ընտրակեղծիք իրականացնելը ցանկության դեպքում բավականին հեշտ է, ուղղակի նոր սխեմաներ են կիրառվում: Փաշինյանը մեղադրում էր ընտրակեղծարարության համար նախկին իշխանություններին, բայց ինքը փայլուն ձեւով կրկնօրինակեց նրանց, անգամ՝ անցավ նրանց: Նա ոչ խղճի խայթ է զգում, ոչ էլ անգամ ամոթ ունի: Ավելին՝ ՀՀ քաղաքացիների ազատ կամքի դրսեւորմանն այս մարդն ամեն գնով խոչընդոտեց: Սպառնաց վարժական հավաքներով, այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացին պարտավոր է գալ ու քվեարկել իր երկրի համար, անկախ բնակության վայրից: Սակայն ստացվում է, որ ոչ միայն այս հարցում մարդկանց չեն խրախուսում, դեռ մի բան էլ խանգարում են, ապօրինի քրեական գործեր են հարուցում, ապօրինի քայլերով փորձում են խանգարել: Նիկոլ Փաշինյանը բռնացել է մարդկանց ազատ կամքի վրա եւ խոչընդոտել նրանց: Փաշինյանը 2018 թվականին՝ անլվա, անթրաշ վիճակում, իր փնթի բոմժերի հետ միասին աշխարհի հայերին կոչ էր անում՝ գալ Հայաստան եւ քվեարկել իր օգտին, բայց երբ տեսավ վտանգ, որ կարող են գալ ընտրության եւ իրեն ձայն չտալ, պարզվեց, որ քվեարկության գալը քրեական հանցագործություն է: Նիկոլ Փաշինյանն իր տարերքում է. սուտ, կեղծիք, սպառնալիք, շանտաժ, ուժի կիրառում, եւ այսպես շարունակ:

- Ընդդիմությունն ինչ պետք է անի, շատ է քննարկվում մանդատները վերցնել-չվերցնելու հարցը:

- Ես կարող եմ ասել, որ, որպես ընտրող, տվել եմ ձայն եւ ուզում եմ, որ իմ ձայնն օգտագործվի հնարավորինս օպտիմալ: Եթե օպտիմալը մանդատ վերցնելն է, թող վերցնեն, եթե չվերցնելն է, ապա թող չվերցնեն, ես ոչ խնդիր չեմ տեսնում: 2018 թվականին ոչ մեկը չէր մտածում, որ ԱԺ-ում պետք է գործազուրկ բոմժեր հավաքվեն, դրա մասին չէր խոսքը, ժողովրդի ցանկությունը: Պետական կառավարումից, օրենքներից հեռու մարդիկ իրենցից խելացի ու բանիմաց մարդկանց են ընտրում որպես պատգամավոր, որպեսզի այդ մարդիկ կարողանան գրագետ աշխատանք տանել: Ես իմ ընտրությունը տվել եմ եւ ցանկանում եմ, որ օպտիմալ լինեն, եթե չաշխատեն իմ ուզած ձեւով, ապա ես ուղղակի էլ իրենց ձայն չեմ տա. սկզբունքը դա է:

- Տեղեկություններ կան, որ Բաքվում անհանգիստ են ընտրությունների արդյունքներով, քանի որ առկա պատկերով Փաշինյանը չի կարող Ալիեւի բոլոր երազանքները կատարել:

- Ադրբեջանում շատ գոհ ու երջանիկ են, որ անցել է իրենց սիրելի Փաշինյանը, բայց երբ պարզվեց, որ Փաշինյանը եթե նույնիսկ հազար անգամ լինի Հայաստանի վարչապետ, սակայն գլոբալ փոփոխություններ, որոշումներ չի կարողանալու կայացնել, դա անհանգստություն է առաջացրել Բաքվում, բայց այդ ամենի մասին թող Փաշինյանը մտածի, ինքը՝ իր տերերը, ոնց ուզում է, թող նրանց ատչյոտ տա»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վնասվել են տանիքներ, մեքենաներ, անասուններ են անկել

Հունիսի 6-ին Ստեփանավանում շուրջ 20 րոպե տեղացած խոշոր կարկուտը մեծ վնասներ է հասցրել համայնքին: Մեզ հետ զրույցում բնակիչները նշում էին, որ վնասի չափերն օր-օրի մեծանում են, քանի որ անձրեւները չեն դադարում, կարկուտից վնասվել են նաեւ բնակարանները: «Հարեւանիս կրած վնասը գույքագրել են, բայց իմը՝ դեռ չէ: Գնացել, համայնքապետարան դիմում եմ տվել, որ եկեք տեսեք՝ ինչ վիճակ է, եթե առաջ միայն կտուրն էր, հիմա արդեն առաստաղն էլ կապիտալ վերանորոգման կարիք ունի»,- նշեց բնակիչներից մեկը:

Մեզ հետ զրույցում Ստեփանավանի համայնքապետի մամուլի խոսնակը նշեց, որ մեծ մասշտաբների վնասներ է կրել համայնքը. «Առաջին անհրաժեշտության աշխատանքներ արվել են ու շարունակվում են արվել մեր կոմունալի բաժնի աշխատակիցների ուժերով, որ մարդիկ ջրի տակ չմնան: Բացի այդ, ձեւավորվել է շտաբ, քիչ առաջ էլ համայնքապետարանում նիստ տեղի ունեցավ: Համայնքի ղեկավարը հստակ ընդգծեց, որ բոլոր տուժողներին օգնություն տրամադրվելու է: Ուղղակի դիմումները շատ են, իսկ մարդկային ռեսուրսները՝ քիչ: Գույքագրում արվում է մինչեւ այս պահը: Շուրջ 1300 տան տանիք ու պատուհան է այս պահի տվյալներով վնասվել, 600-ից ավելի էլ՝ մեքենաներ: Անկած անասունների ոչնչացումը տեղում կազմակերպվել է, որպեսզի համաճարակային վիճակ չունենանք: Այս դեպքում ակնկալում ենք պետական աջակցություն, համայնքի ղեկավարը դիմել է կառավարություն, բնականաբար՝ չի մերժվել, բայց դեռ մրջոցներ չեն տրամադրվել, քանի որ գույքագրումն ավարտված չէ»:

Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի ղեկավար Գեւորգ Մանուկյանը մեզ հայտնեց, որ իրենց բնակավայրում կարկուտ չի տեղացել, բայց ինքն ու համայնքի բնակիչներից մեկը համարվում են տուժող, քանի որ կարկուտի ժամանակ Ստեփանավանում են եղել, եւ իրենց մեքենաները վնասվել են: «Մենք եւս դիմել ենք Ստեփանավանի համայնքապետարան, որպեսզի մեր կրած վնասն էլ գույքագրվի»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆԸ ԵՆՈՔԱՎԱՆ-ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ-ՋՈՒՋԵՎԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ Է, ՈՐԸ ԴԵՌ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՉԷ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի բնակիչներ Արտեմ Մանուչարյանը, Սամվել Սարուխանյանը եւ Հրանտ Գեւորգյանը շուրջ 15 տարի չեն կարողացել իրենց կառուցած առանձնատները գրանցել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում եւ ստանալ անշարժ գույքի սեփականության վկայականներ: Այդ տներից մեկը՝ Հրանտ Գեւորգյանի կառուցած եռահարկ, տուֆակերտ առանձնատունը կիսակառույց է, ներքին հարդարման աշխատանքները կիսատ են: Հ. Գեւորգյանը բնակվում է Ռուսաստանում, իսկ մյուս երկու տների տերերը՝ Արտեմ Մանուչարյանը եւ Սամվել Սարուխանյանը, իրենց ընտանիքներով բնակվում են Ոսկեպարում:

Այդ 3 տները Ոսկեպար գյուղից կտրված չեն, դրանք ոսկեպարցիների տների կողքին են: Ըստ ԽՍՀՄ ժամանակ գոյություն ունեցած քարտեզի՝ այդ տների կողքի ձորով է անցել հայ-ադրբեջանական սահմանը, սակայն այդ տարածքում ադրբեջանցիների տներ, այլ կառույցներ չեն եղել ու չկան: Այդ 3 առանձնատները գտնվում են Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհին հարակից տարածքում: 3 առանձնատների տերերը դեռեւս 2013-ին դիմել են Տավուշի մարզպետարանի հողաշինության եւ հողօգտագործման բաժին, որտեղից էլ խնդիրը ներկայացվել է կառավարություն: 3 առանձնատների տերերին հայտնել են, որ խնդիրը չի լուծվում, որովհետեւ այդ տները կադաստրային քարտեզով ՀՀ տարածքում չեն: Այդ տների տերերն իրավունք չունեն իրենց տները վաճառել, կտակել, նվիրել, գրավ դնել եւ այլն: Մայիսի 30-ին Ոսկեպար գյուղում նախընտրական քարոզչության ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի հետ սահմանազատումը շարունակվելու է: Նա Ոսկեպարում ոչ թե անդրադարձավ այդ 3 առանձնատների խնդրին, այլ նախկինում ադրբեջանաբնակ Ներքին Ոսկեպար (Աշաղի Ասքիպարա) գյուղին հարակից տարածքում 1980-ականներին ոսկեպարցիների կառուցած, լքված երկհարկանի 27 տներին. «Իհարկե, էնտեղ Խորհրդային Միության ժամանակվա տների հետ կապված խնդիրներ կան, էդ խնդիրներն էլ մենք կնայենք, կլուծենք»:

Թե ինչպես է լուծվելու այդ 27 տների հարցը, հայտնի չէ: Միջպետական ավտոճանապարհի Կիրանց-Ոսկեպար հատվածում, ճանապարհի որոշ հատվածներ քարտեզով գտնվում են Ադրբեջանի տարածքում: Սահմանազատման շարունակության դեպքում ԽՍՀՄ ժամանակ անկլավ հանդիսացած Վերին Ոսկեպարը եւ Կիրանց-Ոսկեպար ճանապարհի առանձին հատվածներ, ամենայն հավանականությամբ, կհանձնվեն Ադրբեջանին: 2024թ. գարնանը ոսկեպարցիների հետ հանդիպումների ժամանակ Նիկոլ Փաշինյանը, որպես խնդրի լուծման տարբերակ, նշում էր այդ հատվածներում թունելներ-ճանապարհներ կառուցելը: Կիրանց-Ոսկեպար ճանապարհի հատվածներն Ադրբեջանին հանձնելով, կխաթարվի Իջեւան-Նոյեմբերյան տրանսպորտային կապը: Այդ ճանապարհի այլընտրանքային ուղին Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ճանապարհն է, որի միայն մի փոքր մասն է շահագործման ենթակա:

Այդ կապակցությամբ արված տեղեկատվական հարցումիս Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «2024թ. ՀՀ պետական բյուջեի ծրագրով ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել են 6.3 կմ երկարությամբ (Մ-4) - Ենոքավան-Կարմիրգյուղ (գյուղատեղի)- (Հ-58) հանրապետական նշանակության ավտոճանապարհի (Ենոքավան տանող) հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Աշխատանքներն իրականացրել է «Ճանապարհ» ՍՊԸ-ն: Հանձնված է շահագործման: Այն համարվում է Մ-4-Ենոքավան-Կարմիրգյուղ-Հ-58 ճանապարհի սկզբնամաս, մնացած՝ 65.5 կմ հատվածի վերականգնման համար լիազոր մարմնի կողմից հաստատված ծրագիր չկա»:

Պետբյուջեից 642 միլիոն դրամ է ծախսվել՝ 6.3 կմ հատվածի հիմնանորոգման համար, անցել է 2 տարի, սակայն այդ ճանապարհի շարունակությունը կառուցված չէ: Հավելեմ՝ Կարմիրգյուղ ամառանոցը Ջուջեւանից, միջպետական ավտոճանապարհից շուրջ 20 կմ հեռավորությամբ է, այդ ճանապարհն ասֆալտապատ չէ եւ հիմնանորոգման խիստ կարիք ունի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԸՀ

ԸՆՏՐԱԿԵՂԾԱՐԱՐ ՈՒ ԳՈՂ՝ ԲՈԼՈՐ ԵՐԱՆԳՆԵՐՈՎ

Ես իմ հաշվարկներն ունեմ, հույսս էլ Վահագն Հովակիմյանի վրա չեմ դրել: Ո՞վ է Նիկոլի նախկին օգնական Հովակիմյանը, որ ես նրան հավատամ: Ես նույնիսկ Նիկոլին չեմ հավատում: Արդ, ուրեմն, իմ հաշվարկներով՝ ԱԺ անցողիկ շեմը հաղթահարել է ոչ թե երկու, այլ 3 ընդդիմադիր ուժ՝ «Ուժեղ Հայաստան» դաշինքը, «Հայաստան» դաշինքը եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը: Ընդ որում՝ այս ուժերը հավաքել են այնքան ձայն, որքան պահանջվում է Նիկոլ Փաշինյանին կառավարության շենքից հեռացնելու համար: Ճշմարտությունը սա է, իսկ թե արդյունքների մասին ինչ կասեն ու կխոսեն Նիկոլից մինչեւ Վահագն Հովակիմյան, իմ, շատ կներեք՝ հորս չագուճին չէ:

Ինչո՞ւ եմ համոզված, որ Նիկոլը ստախոս է, իսկ Վահագը՝ ընտրակեղծարար: Նրա ստախոսության վրա շատ չեմ կենտրոնանա, քանի որ այս ուղղությամբ նոր հայտնագործություններ անելու, ինչ-որ դժվար թեորեմներ ապացուցելու խնդիր չկա: Նրա կառավարման 8 տարիներին ՀՀ 3 միլիոն քաղաքացիները 3 միլիոն անգամ վկա են եղել նրա ստախոսության փաստերին: Ինչ ասել է՝ սուտ է եղել, սկսած այն պահից, որ մեզ նշանակեց ՀՀ վարչապետ՝ վարչապետը դու ես, վարչապետը դու ես… Թող 3 միլիոն քաղաքացիներից հենց հիմա մեկն ինձ ասի, որ ինքն այս 8 տարում գոնե 8 վայրկյան վարչապետ է եղել: 8 տարում քանի՞ սուտ կարող էր ասել, հը՞… Ես կանդրադառնամ նրա ամենավերջին ստերին՝ հունիսի լույս 8-ի գիշերվա եւ հունիսի 11-ի առավոտյան ստերին: Հունիսի 8-ին, գիշերը 2:00-ին մտավ եթեր, թե բա՝ 54 տոկոս խփել ենք (ԿԸՀ-ի կայքը հենց այդքան էր ցույց տալիս): ՔՊ-ն էլ ծափ տվեց՝ «Նի-կոլ, վարչապետ, Նի-կոլ, վարչապետ»: Պարզվեց, չէ՞, որ սուտ է, որ ընտրության մասնակիցների կեսից ավելին մերժել է նրան… Մարդն այսօր դեռ պայքարում է 50+1 տոկոսի համար, Վահագն Հովակիմյանի հետ նկարում ու նկարում է, որ մի բան ստացվի: Բա ասում էիր՝ 54 տոկոս… Ո՞ւր է: Հունիսի 11-ին էլ, իմ ծննդյան օրը, առանց ամաչելու հայտարարեց, որ Էդիկ Անդրեասյանը ընտրակաշառք է վերցրել եւ ընտրել «Հայաստան» դաշինքին: Այդպես էլ ասաց՝ ՔՊ-ի քվեները 100 տոկոսով օրգանիկ քվեներ են, իսկ ընդդիմադիրների քվեները՝ 100 տոկոսով ընտրակաշառքով ստացված: Եվ նման բան ասել է աթոռը կորցնելու վախից տակը լցրած մեկը, երբ իմացել է, որ 500 հազարից ավելի մարդ քվե է տվել ընդդիմությանը: Բա չասե՞ս՝ տո այ ստախոս, 500 հազար մարդով կաշառակերություն կլինի՞, որ դու մեզ զրպարտում ու կաշառակեր ես անվանում: Մյուս կողմից էլ՝ այդ ինչպե՞ս եղավ, որ ՔՊ-ի 700 հազար նկարովի քվեն դարձավ օրգանիկ: Երբ ես այդ թվից հանում եմ բոլոր անճարներին՝ դպրոցի տնօրեններ, ուսուցչական կոլեկտիվներ, մանկապարտեզի վարիչներ ու դայակներ, համայնքային նոմենկլատուրա, թոշակառուներ, 65-ը լրացած բիձեք, վարչապետի աշխատակազմ, տակը մնում է մի ստվար բազմություն, որ ՔՊ-ին ձայն է տվել բացառապես շահով-փողով՝ թոշակ, վիրահատություն, վարկ-մարկ: Սա՞ է քո 100 տոկոս օրգանիկ ընտրազանգվածը…

Վերեւում արդեն ակնարկեցի, որ Նիկոլ Փաշինյանն ու Վահագն Հովակիմյանը, ստախոս լինելուց բացի, նաեւ ընտրակեղծարար են: Այս պարագայում հարցը կարելի է նաեւ այլ կերպ դնել՝ նրանք ընտրակեղծարար ծնվե՞լ են, թե՞ դարձել: Կարծիքներն այստեղ կիսվում են: Նրանք, որ Նիկոլի քաղաքական ծնունդը հաշվում են 1996 թվականից, համարում են, որ նա այդպիսին ծնվել է: Ես ավելի շատ հակված եմ երկրորդ տարբերակին՝ Փաշինյանն ընտրակեղծարարության նուրբ արվեստը սկսել է յուրացնել 2018 թվականից, երբ պատահաբար դարձավ վարչապետ եւ իր առջեւ խնդիր դրեց այլեւս չիջնել այդ աթոռից: 2021-ին, շնորհիվ իր քաղաքական հայրերի եւ արեւմտյան միսիոներների, նա արդեն ոչ այնքան վարժ ընտրակեղծարար էր՝ այդ ժամանակ դեռ Մուկուչյանն էր նրան օգնում: Հետո սկսեց պարապել մանր-մունր ընտրությունների վրա, փոփոխական հաջողություններով համայնքապետեր էր ընտրում, քաղաքապետեր, որտեղ պարտվում էր՝ հաղթողներին բռնել էր տալիս, նստեցնում, հետապնդում եւ այլն: Նա պռավալին շատ մոտ էր Երեւանի վերջին ընտրություններում, բայց նրան փրկեց ՔՊ-ի սատելիտ ուժերից մեկը՝ Դոգը, քաղաքապետ դարձնելով Ավինյանին: Հետո եղան

Գյումրի, Փարաքար… Պարտվեց: Վաղարշապատում մի կերպ հաջողություն արձանագրեց, բայց ոչ ոք դա չնկատեց, որովհետեւ դրանից օրեր առաջ խայտառակ պարտվել էր Մայր Աթոռից: Մի խոսքով՝ հեշտ չի եղել ընտրակեղծարար դառնալու նրա անցած ճանապարհը: Փոխարենը Փաշինյանն իր նոր մասնագիտության մեջ փայլեց 2026-ին՝ ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ եւ ընտրություններին հաջորդած օրերին: Ձայների հաշվարկը չավարտված կեղծեց՝ հայտարարություն արեց, հաջորդ օրը կեղծեց, երրորդ օրը կեղծեց, հունիսի 11-ին դեռ կեղծում էր՝ քաղաքական ուժերի քվեաթերթիկները մի տրցակից մյուսի վրա դնելով: Էն խեղճ ԲՀԿ-ին տարան-բերին, տարան-բերին, անցնում է-չի անցնում, անցնում է-չի անցնում: Հիմա չասե՞մ՝ տո այ օրգանիկ ընտրակեղծարար, դու ի՞նչ գործ ունես Վահագն Հովակիմյանի թղթերի մեջ, քիթդ կոխել՝ խառնում ես, որ ի՞նչ անես: Տեղդ նստիր ու սպասիր վերջնահաշվարկին, եթե վստահ ես, որ հաղթել ես:

Եվ ես, իմ հաշվարկներից ելնելով, Նիկոլ Փաշինյանին հայտարարում եմ ընտրակեղծարար՝ գող մարդու իրավունքների բոլոր երանգներով. թվի գող, քվեի գող, իշխանության գող, հայրենիքի գող, իրավապահ կառույցների գող, դատարանների գող, արդարության գող եւ, վերջապես՝ ՀՀ ավելի քան 500 հազար քաղաքացիների բարի համբավի գող:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՊՈՒՏԻՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Ով ասում է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը չի շնորհավորել Նիկոլ Փաշինյանին, սխալվում է, Պուտինը շնորհավորել է՝ բաց եւ հրապարակային տեքստով: Հունիսի 11-ին «Ռոսսելխոզնադզոր» կոչվող կազմակերպությունը հայտարարեց, որ արգելում է Հայաստանից կարանտինային բոլոր ապրանքների արտահանումը Ռուսաստանի տարածք, ինչպես նաեւ՝ Ռուսաստանի տարածքով տարանցումը: «Ռոսսելխոզնադզորը» հայտարարեց, որ Հայաստանի կարանտինային եւ բույսերի պաշտպանության ծառայության անարդյունավետությունը սպառնում է Ռուսաստանի եւ ԵԱՏՄ-ի բուսասանիտարական բարեկեցությանը: Փաստացի, Ռուսաստանն արգելեց իր տարածք Հայաստանում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի ամբողջ արտահանումը: Իսկ դրանից լավ շնորհավորանք չի լինում, ուղղակի ում ուղղված է շնորհավորանքը, պետք է կարդա եւ հասկանա: Ընդ որում, այս որոշումը կայացվեց այն նույն օրը, երբ Փաշինյանի հանձնարարությամբ որոշվեց ԲՀԿ-ին զրկել անգամ կեղծված ընտրությունների արդյունքում ստացած հինգ մանդատներից: Այսինքն, ապօրինություն իրականացվեց մի կուսակցության նկատմամբ, որի նախագահ Գագիկ Ծառուկյանը խորհրդարանական ընտրությունների ամբողջ ժամանակ հանդես էր գալիս Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները կարգավորելու, Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամ մնալու օգտին:

Երբ Փաշինյանին հարցնում են, թե ինչու Ռուսաստանի նախագահին իրեն չի շնորհավորել, փորձում է առիթն օգտագործել եւ շողոքորթել Պուտինին՝ այն հույսով, որ այդ քծնանքը կօգնի իրեն՝ ստանալ ուշացող շնորհավորանքը. «Ես ութ տարուց ավելի է՝ աշխատում եմ ՌԴ նախագահի հետ, գիտեմ, որ նա ռացիոնալ մարդ է, հենվում է փաստերի եւ փաստարկների վրա, եթե նրանք ունեն մտահոգություններ, մենք համբերատար կփարատենք, ոչ մի խնդիր չկա: Եվ կշարունակենք աշխատել»: Վլադիմիր Պուտինը ռացիոնալ մարդ է, իսկ արդյո՞ք ռացիոնալ մարդ է Փաշինյանը: Երբ նա ասում է, որ Պուտինը հենվում է փաստերի վրա, նկատի ունի, որ ինքը Պուտինին կանգնեցրել է փաստի առաջ, եւ այդ փաստն իր գոյությունն է Հայաստանի վարչապետի պաշտոնում, եւ որպես ռացիոնալ մարդ՝ նա պետք է հարմարվի, համակերպվի այդ փաստի հետ: «Ռոսսելխոզնադզորի» որոշումը կայացվել է այն բանից հետո, երբ Փաշինյանն իրեն հռչակել էր Հայաստանի վարչապետ, եւ ԿԸՀ-ն հրապարակել էր նախնական արդյունքները, նշանակում է, որ Ռուսաստանի նախագահը մտադիր չէ հաշվի նստել նկարված արդյունքների փաստի հետ:

Դատելով դեպքերի զարգացումներից՝ կարող ենք ասել, որ Ռուսաստանի իշխանությունը հետքայլ չի անելու նախօրոք արտահայտած դիրքորոշումից. Հայաստանը պետք է հստակ որոշում կայացնի՝ գնո՞ւմ է դեպի ԵՄ, թե՞ մնում է ԵԱՏՄ-ում: Ավելին, Հայաստանի խորհրդարանական կասկածելի ընտրություններից հետո, երբ այլեւս պարզ էր, որ Փաշինյանին հաջողվել է ձեռնասուն մեծամասնություն ձեւավորել, ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հայտարարեց, որ Հայաստանի խորհրդարանի կողմից անցած տարվա գարնանն ընդունած օրենքը՝ ԵՄ-ին ինտեգրվելու գործընթաց սկսելու մասին, իրենք համարում են ընտրություն՝ հօգուտ ԵՄ-ի: Լավրովի ասածի իմաստն այն էր, որ քանի դեռ այդ օրենքը չի չեղարկվել, Ռուսաստանը համարելու է, որ Հայաստանը գնում է դեպի ԵՄ, եւ Հայաստանի հետ հարաբերությունները կառուցելու է դրանից ելնելով: Այսինքն, անգամ հստակ պատասխանին եւ համաժողովրդական հանրաքվեին այլեւս չեն սպասում:

Ռուսաստանը, արգելելով Հայաստանից ապրանքների ներմուծումն իր երկրի տարածք, ոչ միայն Հայաստանին դուրս է դրել ԵԱՏՄ-ից, այլեւ հռչակել է իրեն թշնամի երկիր, այո, թշնամի, անգամ՝ ոչ չեզոք: Որովհետեւ, եթե Հայաստանին վերաբերվեր որպես չեզոք երկրի, ապա կարող էր մաքսային կամ հարկային դրույքաչափեր սահմանել Հայաստանից կատարվող արտահանումների նկատմամբ: Միայն թշնամի երկրի դեպքում է, որ շուկան փակվում է ամբողջապես, առանց որեւէ բացառության:

Ռուսաստանը, իհարկե, կընդունի Հայաստանի գործող իշխանության գոյության փաստը, հնարավոր է, որ ընտրությունների, այսպես կոչված, պաշտոնական արդյունքները հրապարակվելուց հետո դրանցում արձանագրված կեղծիքների եւ ապօրինությունների մասին հիշատակումով հայտարարվի, որ Ռուսաստանի իշխանությունը դրանց արդյունքներն ընդունում է ի գիտություն: Բայց գործող իշխանության գոյության ճանաչումը ոչինչ չի փոխելու հարաբերություններում, տնտեսական կապերը չեն վերականգնվելու, թշնամանքին պատասխանելու են թշնամանքով, թշնամությունը գնալով խորանալու է: Իսկ թե ինչ տնտեսական եւ հումանիտար հետեւանքներ դա կարող է առաջացնել, կարող ենք միայն ենթադրել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ Է ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԱՂՏՆԻ

ՆԳՆ

Ընդդիմության հանրահավաքների, քաղաքական մեծ հնչեղություն ունեցող դատավարությունների ժամանակ ծառայություն են իրականացնում ոստիկանության գվարդիայի մեծ թվով աշխատողներ: Ներքին գործերի նախարարության կազմում ոստիկանության գվարդիան ստեղծվել է 2025 թ. նոյեմբերի 1-ին: Գվարդիայի ստեղծումն իշխանությունը ներկայացրեց որպես ոստիկանության գործառույթների համապարփակ բարեփոխում: Գվարդիան փոխարինեց նախկինում գործող ոստիկանական զորքերին: Ոստիկանության գվարդիայի խնդիրները, ըստ բարեփոխիչների, պետական եւ հասարակական կարեւորության օբյեկտների պահպանությունն է, հասարակական կարգի ապահովումն ու անվտանգության պահպանումը: Գվարդիան իրականացնում է հատուկ պահպանության, ուղեկցման եւ օպերատիվ աջակցության գործողություններ՝ աջակցելով ոստիկանության մյուս ստորաբաժանումներին անվտանգության ապահովման գործում: Ներքին գործերի նախարարությունը ոստիկանության գվարդիայի կրտսեր խմբում ընդունելության հայտարարության մեջ դիմորդներին ընդամենը մի քանի պահանջ է ներկայացրել՝ միջնակարգ կրթություն, պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների եւ օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերի), տիրապետել հայերենին, իրենց անձնական հատկանիշներով, գործնական կարողություններով, ֆիզիկական պատրաստականությամբ եւ առողջական վիճակով կարողանալ կատարել ոստիկանության գործառույթները: Այսինքն, նվազագույն որակավորում եւ գիտելիքներ են պահանջվում՝ ոստիկանության գվարդիայում աշխատելու եւ բավականին բարձր աշխատավարձ ստանալու համար:

Այդ հայտարարության մեջ դիմորդների համար հրապուրիչը, բնականաբար, այն կետն է, որտեղ նշված է. գվարդիայի ծառայողները կունենան սոցիալական երաշխիքներ, մրցունակ եւ կայուն աշխատավարձ: Որքա՞ն է այդ մրցունակ աշխատավարձը: Ապրիլի 23-ին ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Ներկայում որքա՞ն է ոստիկանության գվարդիայի աշխատողների ընդհանուր թիվը, որքա՞ն է նրանց միջին աշխատավարձը»: ՆԳՆ-ից ստացված պատասխանում նշված է.

«1) Համաձայն ՀՀ ՆԳ նախարարի՝ 2024 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» թիվ 55-Լ հրամանով հաստատված հավելվածի 103-րդ կետի՝ ոստիկանության գվարդիայի աշխատողների թվի վերաբերյալ հայցվող տեղեկությունը դասվում է գաղտնի տեղեկատվության շարքին, ուստի այն տրամադրել հնարավոր չէ:

2) ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողների (ատեստավորված եւ չատեստավորված) միջին աշխատավարձի հաշվարկը՝ ըստ պաշտոնների խմբերի.

• գլխավոր խումբ՝ 453.788 դրամ, ատեստավորման լավ գնահատականի դեպքում՝ 733.788 դրամ

• ավագ խումբ՝ 414.759 դրամ, ատեստավորման լավ գնահատականի դեպքում՝ 694.759 դրամ

• միջին խումբ՝ 348.963 դրամ, ատեստավորման լավ գնահատականի դեպքում՝ 611.963 դրամ

• կրտսեր խումբ՝ 198.153 դրամ, ատեստավորման լավ գնահատականի դեպքում՝ 341.153 դրամ:

Հարկ է նշել, որ հաշվարկները կատարվել են յուրաքանչյուր խմբում ընդգրկված մեկ պաշտոնի համար՝ 10-15 տարվա ծառայության ստաժի դեպքում»:

Ինչո՞ւ է ոստիկանության գվարդիայի աշխատողների թիվը համարվում գաղտնի տեղեկատվություն: Գուցե ոստիկանության գվարդիայի աշխատողների թիվն այնքան մեծ է, որ ՆԳ նախարարությունը հարկ չի՞ համարել այն հրապարակել: Ինչ վերաբերում է աշխատավարձերին, ապա արձանագրենք, որ այսքան վարձատրություն մեր երկրում նույնիսկ մի քանի բարձրագույն կրթություն ունեցող գիտնականները չեն ստանում: Պարզ է, որ երկիրը վերածել են ոստիկանապետության, եւ իշխանությանը պաշտպանող ու հանրահավաքների եւ ընդդիմության դեմ մարտնչող գվարդիայի ծառայողները մեր երկրում ավելի կարեւոր դերակատարում ունեն, քան բժիշկները, ուսուցիչները կամ գիտնականները:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Վերջին 3 օրերին 5 տասնյակից ավելի սպաներ եւ զինվորականներ դատական հայց են ներկայացրել պաշտպանության նախարարության դեմ: Զինվորականների ներկայացուցիչները մեջբերել են հենց Պնախարարի կողմից հաստատված հրամանը եւ պահանջում են չօգտագործված արձակուրդից եւ ծառայողական պարտավորություններից ելնելով ոչ ծառայողական օրերի քանակը հաշվել եւ դրա դիմաց փոխհատուցում վճարել: Քանի որ շատ են հայցադիմումները, ներկայացնենք դրանցից մի քանիսը:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքի 227-րդ հոդվածի համաձայն, ՀՀ օրենքին համապատասխան՝ ծառայողական շաբաթվա տեւողությունը սահմանվում է ժամկետային ծառայության զինծառայողների, ուսանողների եւ զինվորական ուսումնական հաստատությունների, ուսումնական կենտրոնների (զորամասերի) ունկնդիրների եւ ուսանողների համար՝ վեցօրյա շաբաթ՝ հանգստյան մեկ օրով, սպաների, ենթասպաների, պայմանագրով զինվորական ծառայության անցած զինվորների, սերժանտների, ավագների, ինչպես նաեւ՝ կին զինծառայողների համար՝ հնգօրյա շաբաթ՝ հանգստյան երկու օրով:

Ըստ նույն օրենքի՝ սպաների, ենթասպաների, պայմանագրով զինվորական ծառայության անցած զինվորների, սերժանտների, ավագների, ինչպես նաեւ՝ կին զինծառայողների շաբաթական ծառայողական ժամանակի ընդհանուր տեւողությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակի տեւողությունը: Զինծառայողներն իրավունք ունեն ստանալ փոխհատուցում չօգտագործված արձակուրդի դիմաց: Հայցվորները գրել են՝ քանի որ պատասխանողի կողմից չեն կատարվել ՀՀ օրենսդրության վերը նշված պահանջները, եւ դրա արդյունքում խախտվել են իրենց իրավունքները, ուստի, դատարանից խնդրել են՝ պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ կատարելու որոշակի գործողություններ, այն է՝ հաշվարկել եւ վճարել Գագիկ Ալեքսանդրի Հունանյանին զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի օրերի եւ ոչ ծառայողական օրերին ծառայություն իրականացրած օրերի փոխհատուցման ենթակա 9 մլն 996 հազար դրամը: Արտյոմ Մեսրոբյանը նույն պահանջով եւ օրենսդրական նորմերով ՊՆ-ից պահանջում է վճարել փոխհատուցման ենթակա 1 մլն 395 հազար դրամը: Ասքանազ Սահակյանի ներկայացուցիչ Արսեն Անտանոսյանը նույնաբովանդակ հայց է ներկայացրել դատարան. «ՀՀ պաշտպանության նախարարի 17.07.2023 թվականի թիվ 983-Լ հրամանի 2-րդ ենթակետով սահմանված հաշվարկով եւ նույն հրամանով սահմանված կարգի 2-րդ կետով սահմանված սկզբունքների համաձայն, հաշվարկել նախկին զինծառայող Ասքանազ Սահակյանի զինվորական ծառայության ընթացքում 01.01.2003-14.04.2021 թթ. չօգտագործված արձակուրդի եւ ծառայողական պարտավորություններից ելնելով ոչ ծառայողական օրերի քանակը եւ դրա դիմաց 5 մլն դրամ փոխհատուցում ստանալու վերաբերյալ կայացնել հրաման: Խնդրում ենք հայցը բավարարելու դեպքում անդրադառնալ նաեւ փաստաբանի խելամիտ վարձատրությանը...»:

Արսեն Անտանոսյանին հարցրինք՝ Պնախարար Սուրեն Պապիկյանն իր իսկ արձակած հրամանը չի՞ կատարում: «Բերեք՝ ես հարցազրույց չտամ, գործի մանրամասները չեմ կարող ներկայացնել՝ զուտ գործի բնույթից ելնելով: Ուսումնասիրեք ՊՆ-ի 2023 թվականի թիվ 983-Լ հրամանը, այդ հրամանի հիման վրա ՊՆ-ն փոխհատուցման գումար է նախատեսում նախկին սպաներին: Դատարան ենք դիմել, որպեսզի հաշվարկ կատարվի, միգուցե լինեն օրեր, եւ որոնք որ թերի հաշվարկ է կատարվել կամ ոչ լիարժեք հաշվարկ է կատարվել: Եթե դատարան ենք դիմում, նշանակում է՝ վճարումներ չեն կատարվել: Ուղղակի շատ ծանրաբեռնվածություն է, պատկերացրեք զինծառայողների քանակը եւ մի նախարարություն: Վճարումներն ուշանում են, մենք էլ իրավական պաշտպանություն ենք իրականացնում»: Նշենք, որ նմանատիպ հայցով վերջին ամիսներին դատարան են դիմել հարյուրից ավելի զինվորականներ:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արմեն Կիլինկարովի նկատմամբ հետախուզում է հայտարարվել

Երեկ Քննչական կոմիտեն հայտնել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ համարվող Արմեն Կիլինկարովի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին:

Ըստ ՔԿ-ի՝ Կիլինկարովը, որը հայտնի է նաեւ Արմեն Ալավերդցի մականունով, կասկածվում է քրեական ենթամշակույթի պահպանման եւ դրա շրջանակներում ազդեցության օգտագործման մեջ: Քննության տվյալներով՝ նա փորձել է կարգավորել ինչ-ինչ անձանց միջեւ ծագած գույքային եւ ֆինանսական վեճը:

Հետաքրքիր է, որ խոսքն ավելի քան 1 տարի առաջվա՝ 2025 թվականի ապրիլին տեղի ունեցած իրադարձությունների մասին է: ՔԿ-ի վարկածով, այդ օրերին տարբեր քաղաքացիներ դիմել են Կիլինկարովին՝ հարցեր լուծելու խնդրանքով: Մասնավորապես, ոմն Տ. Ու.-ն 4 տարի առաջվա պարտքի՝ 3 մլն 300 հազար ՀՀ դրամի վերադարձման խնդրանքով է դիմել Կիլինկարովին, որի դիմաց պետք է վերադարձրած պարտքից նրան տար 1 մլն 300 հազար ՀՀ դրամ: Իսկ ի՞նչ մեթոդներով է օրենքով գողը փորձել վերադարձնել փողը: «Մասնավոր վեճը Տ. Ու.-ի օգտին լուծելու նպատակով՝ Ա. Կ.-ն Ա. Ա.-ի հասցեին հնչեցրել է հայհոյանքներ՝ պահանջելով բոլորի ներկայությամբ ներողություն խնդրել, ինչը նա կատարել է»:

Նախաքննության ընթացքում Արմեն Կիլինկարովին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, բայց քանի որ Կիլինկարովը երկրում չէ, հայտարարվել է հետախուզում:

Արմեն Կիլինկարովի անունը նախկինում եւս հայտնվել է քրեական լրահոսում, նա տարբեր արյունալի «ռազբորկաների» մասնակից է եղել: 2012 թվականի հունվարի 12-ին Ալավերդի քաղաքի կենտրոնում՝ Սայաթ-Նովայի անվան հրապարակում, Կիլինկարովի վրա կրակել են, նա վիրավորվել է, իսկ նրա եղբայրը՝ Գագիկ Կիլինկարովը, տեղում մահացել է: Այս դրվագն արյան վրեժի՝ վենդետայի շղթայի մի մասն էր: Դրանից մոտ 10 տարի առաջ Արմեն Կիլինկարովին մեղադրել էին Ալավերդու բնակիչ Արսեն Շաքարյանի սպանության մեջ, սակայն նա չդատվեց այդ մեղադրանքով:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԱՍԵՐԸ՝ ՀԱՅ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Պարսկաստանը (Իրանը) չպարտվեց Ամերիկային: Շնորհիվ առաջնորդության: Պարսիկ առաջնորդների շնորհիվ: Նրանք կանգնեցին ժողովրդի առաջին շարքերում՝ տիեզերքից իրենց ուղղված նշանացույցի տակ, եւ հայտարարեցին՝ դե կրակեք եւ սպանեք մեզ, մենք չենք հանձնվում: Նրանք չհանձնվեցին, չհամակերպվեցին, չընկրկեցին: Գնացին գիտակցված մահվան: Զոհվեցին: Եվ հաղթեցին:

Որովհետեւ առաջնորդների անձնազոհությունը ոգեկոչեց, համախմբեց, ոտքի հանեց ժողովրդին: Որովհետեւ ժողովուրդը, որը պատրաստ էր ու ելել էր իր առաջնորդների դեմ, այս անգամ տեսավ, որ նրանք այլեւս մարմնավորում են ոչ թե իշխանության վայելքը, այլ՝ պարտքը, ժողովուրդը տեսավ, որ առաջնորդը հավատարիմ է իր կոչմանը, պատրաստ է զոհաբերվելու եւ զոհաբերվում է հանուն իր երկրի:

Նմանատիպ ակնկալիք է հիմա Հայաստանում: Հայաստանը հիմա ինքնազոհաբերության պատրաստ առաջնորդի եւ առաջնորդների կարիք ունի:

Վերջին տարիներին բազմաթիվ զուր մեղադրանքներ են հնչել ժողովրդի հասցեին: Այնինչ նա բազմիցս է ոտքի ելել (առնվազն չորս անգամ), բայց պարտվել է, որովհետեւ չի գտել իր հաղթական առաջնորդին: Չի ունեցել հաղթանակի տանող առաջնորդ եւ առաջնորդություն: Եվ հիասթափվել է: Եվ հուսահատվել է: Բայց դարձյալ ու դարձյալ ոտքի է ելել: Հոգու անտեսանելի խորքերում արթնացրել է անթեղված ոգին ու ոտքի ելել:

Նույնը եղավ նաեւ այս ընտրություններում: Եվ հուսանք, որ հիմա կարծես կա առաջնորդ, կարծես կան առաջնորդներ: Եվ ներկայիս առաջնորդների բուն պարտքը հիմա ժողովրդի ոգին չկոտրելն է: Եթե կոտրվեց, շատ ծանր հետեւանքներ կունենա, ավելի ծանր, քան Արցախի հանձնումը:

Ուստի ես մեր առաջնորդներին կոչ եմ անում՝ դաս առնել պարսիկ առաջնորդներից, չհանձնվել, չընկրկել, գնալ առաջնորդությունն ինքնազոհաբերությամբ հաստատելու եւ այդպես հաղթանակի հասնելու ճանապարհով: Դուք ոչ թե ընդդիմության առաջնորդն եք, այլ՝ հայկականության: Ձեր խնդիրը հայկականությանը եւ Հայաստանին սպառնացող վտանգին հաղթելն է: Նաեւ՝ արդարության մարտիկի կոչմանը հավատարիմ լինելը: Այսօր՝ ընտրությունների կեղծիքի հետ չհամակերպվելով, պայքարը շարունակելով: Գտեք ձեւը, միջոցը, եղանակը:

Ես իմ էությամբ գանդիստ եմ (չշփոթել ոմն անձի «ոչ բռնի ու թավշյա» խաբեության հետ: Գանդիզմը եղել է ու կա միշտ, իբրեւ էություն, ազատ կամքի, հարատեւ պայքարի դրսեւորման ձեւ ու միջոց: Իբրեւ գանդիզմի օրինակ՝ կարող ենք բերել նույնիսկ Հիսուս Քրիստոսին կամ թեկուզ առաջին նահատակներին. ի դեպ, «նահատակ» բառի իմաստներից մեկն «առաջամարտիկ»-ն է, ասել կուզի՝ առաջնորդը, իսկ բառի առաջին՝ «նահ» արմատը կարող եք տեսնել նաեւ «նահ/ապետ» ու «նախ/հ/արար» բառերում:

Գանդիզմը խաղաղ անհնազանդությունն է: Անզեն կռիվն է: Զոհաբերության պատրաստակամությունն է: Հավատն է մարդու եւ մարդկության, արդարության եւ Աստծո նկատմամբ: Կյանքով ծառայությունն է: Բայց գանդիզմը ի վերջո մարտական առաջնորդ է ծնում:

Հասարակ մարդու լուծը փայտյա է, առաջնորդինը՝ փշե: Լինում է, որ առաջնորդը պիտի անձնազոհության գնա, որպեսզի ապրի ժողովուրդը, որին առաջնորդում է: Որպեսզի հաղթանակի գաղափարը, որին ծառայում է: Որպեսզի ոգեկոչվի ժողովուրդը, որին առաջնորդելու լուծն է հանձն առել: Լուծ, որը խաչ է:

Բայց բոլորս քաջ գիտենք, որ սա ինքնին արդյունք չի տա: Պետք է առաջամարտիկ եւ առաջնորդ լինել ու մնալ նաեւ այլ վիճակներում: Իսկ խնդիրը հայկականության ու Հայաստանի պաշտպանությունն ու պահպանումն է: Ոչ թե ինչ-որ սահմանադրական մեծամասնություն տալ-չտալը, ոչ թե ինչ-որ դատավոր կամ դատախազ նշանակելու իրավունք ունենալ-չունենալը, ոչ թե ինչ-որ այլ բան, այլ Հայաստանը կործանման տանող, հայկականությունը վերացնող իշխանության հեռացումը, ազգային պետության ու պետականության պաշտպանությունն ու զորացումը:

Ժողովուրդը ձեզ ձայն է տվել հիմնականում մեկ նպատակով՝ չարիքի իշխանությունը վերացնելու համար: Եվ դուք հանձն եք առել դա: Կատարեք ձեր հանձնառությունը: Եվ պատկերացրեք, թե ինչ ժողովրդական համախմբում կլինի այդ հանձնառությամբ հրապարակ ելած առաջնորդների շուրջ եւ թիկունքում, ինչպիսի գիտակցում կտիրի, երբ մարդիկ տեսնեն, որ առաջնորդները ոչ թե ինչ-ինչ անձնականության կրող են, այլ հանուն երկրի, հանուն գաղափարի պայքարող եւ անձնազոհության գնացող ոգի:

Պատկերացրեք, թե ինչ կանի ժողովուրդը, եթե առաջնորդները նման առաքելություն ստանձնեն, գնան ինքնազոհությամբ հաղթելու ճանապարհով: Բայց իմ այս առաջարկը սոսկ տարբերակ է եւ սոսկ իմ տարբերակը: Ոչ էլ խորհուրդ է. դա ընդամենը երազանք է:

Ձերը նպատակ է: Գտեք նպատակն իրականացնելու ձեր ձեւը, գտեք հաղթականի ճանապարհը, գտեք ժողովրդին վերածնունդ պարգեւող խոսքը, գտեք ոգին անկոտրում պահող գործողությունը: Հետեւեք պարսիկների օրինակին, դաս առեք նրանցից: Ի դեպ, պարսիկները մեզնից առնվազն երկու դաս քաղել են, այն էլ՝ Ավարայրում. մեկը՝ կրոնական հանդուրժողականությունը, որ պահպանում են մինչ օրս, մյուսը՝ «մահ իմացյալ»-ը, որից երեւում է նրանց այսօրվա վարքը:

Հասկանալի՞ է. «մահ իմացյալ»-ը պարսիկները մեզնից են սովորել, դրա շնորհիվ են հաղթել:

ՀԳ. *Եվ ներողամտաբար ընդունեք մի նախազգուշացում եւ մի վտանգավոր իրողության փաստագրում: Եվ հետեւություն արեք:*

Նախազգուշացում. եթե դուք չհաղթեք կամ նահանջեք, կամ թեւակի իսկ ընկրկեք, ոմն անձը ձեզ կոչնչացնի: Մեզ էլ՝ ձեզ հետ: Նաեւ՝ հայկականությունն ու Հայաստանը:

Վտանգավոր իրողություն. այսօր իշխանությունն ուզուրպացրած ոմն անձը երբեք կամովին չի զիջի իշխանությունը: Կձգտի ամեն գնով պահպանել այն: Նաեւ՝ արյան ու սպանդի գնով: Բայց նա իշխանությունը կպահպանի ոչ թե սոսկ իշխանություն ունենալու կամ, ինչպես թյուրմացաբար սահմանափակվում են շատերը՝ դրա միջոցով իր կաշին փրկելու համար, այլ այդ իշխանությամբ իր ծրագիրն իրագործելու հնարավորություն ունենալու համար: Եվ այդ հնարավորությունը կգործադրի նույնպես ամեն գնով:

Իսկ այդ ծրագրի էությունը հայ ինքնությունը մետամորֆոզի ենթարկելն է, հայկականությունը եւ Հայաստանը կործանելն է: Ու այդ ընթացքում նույնպես կոչնչացնի եւ ձեզ, եւ մեզ՝ իբրեւ խոչընդոտ ու թշնամի, իբրեւ տեսակների պայքարի բնական օրենքի դրսեւորում: Եվ ամենավերջում. դուք՝ առաջնորդներ, խոստացել եք տեր կանգնել ընտրողների ձայներին: Կատարեք ձեր խոստումը:

Եղեք առաջնորդ:

ՀԳ 1. *Ասելիքս խմբագրություն ուղարկելուց առաջ ականջիս հասավ, որ Նիկոլ Փաշինյանն իր առաջին ճեպազրույցում հայտարարել է, թե ընդդիմությունն առանց կաշառքի ոչ մի ձայն չի ստացել: Ես իմ օրինակով հայտարարում եմ, որ Նիկոլ Փաշինյանը սուտ է ասում: Ուստի ստախոս է: Եվ գուցե այս թեմայով ընտրողները ֆլեշմոբի նման մի բան անցկացնեն, թե քանի հոգի է Նիկոլ Փաշինյանին ստախոս համարում:*

Հակոբ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՊԵԼԵՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԻՆՈՆ

Որեւէ մեկի մոտ եթե խոսես ֆուտբոլի մասին, անշուշտ, առաջին հերթին անդրադարձ կլինի բրազիլացի ֆուտբոլի լեգենդ Պելեին: Նրա անունը դարձել է մի տեսակ ֆուտբոլ սպորտաձեւի հոմանիշ կամ սիմվոլ: Պելեն աշխարհի մասշտաբով ֆուտբոլային փառքի խորհրդանիշ է եւ մինչ այսօր ներշնչանքի աղբյուր՝ միլիոնավոր սկսնակ ֆուտբոլիստների համար: Պելեն, լեգենդար ֆուտբոլիստ լինելուց զատ, նաեւ բավական ներկայացված է կինոյում: Սպորտային փառքի տարիներին լեգենդը գրավել է բազմաթիվ պրոդյուսերների եւ ռեժիսորների ուշադրությունը: Նրա անհավանական ճանաչվածությունը նրան զուտ մարզիկի շրջանակից դուրս է բերել, դարձրել մշակութային ֆենոմեն, Բրազիլիայի խորհրդանիշ, կատարված երազանքի, հաջողության պատմության հերոս: Մեկը, որի բնատուր տաղանդը, համադրվելով աշխատասիրության հետ, բերել է գլխապտույտ հաջողությունների: Ամենանշանակալի կինոնկարը, որտեղ Պելեն հանդես է եկել, «Հաղթանակն» (Victory) է: Ֆիլմը թողարկվել է 1981 թվականին: Ռեժիսորն էր Ջոն Հյուսթոնը: Այն պատմում է դաշնակից երկրների ռազմագերիների եւ գերմանացի զինվորականների թիմերի միջեւ ֆուտբոլային հանդիպման մասին: Դեպքերը կատարվում են Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Ֆիլմն ունեցել է ահռելի հաջողություններ: Նրա հետ նկարահանվել են նաեւ Սիլվեսթեր Ստալոնեն, Մայքլ Քեյնը, Մաքս ֆոն Սյուդովը: Պելեին մարմնավորել է ֆուտբոլիստ Լուիս Ֆերնանդեսը: Նրա կերպարն առանցքային նշանակություն չուներ, իհարկե, սակայն ֆուտբոլային դրվագները՝ նրա մասնակցությամբ, կինոնկարում ամենահիշվող տեսարաններից են դարձել:

Պելեի, այսպես ասած՝ ֆիլմագրության մեջ կարեւոր տեղ են զբաղեցնում վավերագրական նախագծերը: Նրա կյանքի ուղին ինքնին մեծ էկրաններին վայել կինոնկարի սյուժե էր: Այս առումով, հատկապես մեծ ճանաչում ունի Netflix-ի թողարկած վավերագրական ֆիլմը, որտեղ մանրամասն պատմվում է լեգենդար ֆուտբոլիստի անցած մարզական օղու, հաղթանակների, հասարակական գործունեության եւ բրազիլական հասարակության վրա ունեցած ահռելի ազդեցության մասին: Կինոնկարում ոչ միայն նրա հաղթանակներն են, այլ նաեւ՝ կյանքի բարդ պահերը, որոնք թույլ են տալիս տեսնել եւ ճանաչել Պելեին՝ որպես մարդու:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՍԵՍ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆՔ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ



«Հրապարակի» զրուցակիցը լրագրող, գրող **Հովհաննես Կարապետյանն** է:

- Ձեզ համար սպասելի՞ էին նման ընտրությունները: Ի՞նչ ակնկալիքներ ունեինք, ի՞նչ ստացանք: Մեր ընդդիմությունը, ժողովուրդն ի՞նչ անելիքներ ունի այս իրավիճակում:

- Ընտրություններն ավարտվեցին, իսկ մեր կյանքի անհանգիստ ռիթմը մնաց նույնը: Ակնկալում էինք անփոթորիկ ծով, բայց խորտակվելու վտանգը կախված է մեր գլխին: Վիճակից ելք գտնելու որոնումները շարունակվում են: Շարունակվում է արդարության հասնելու ուղու որոնման ընթացքը: Բնական հարց է ծագում՝ ինչո՞ւ այսպես ստացվեց:

- Ինչպե՞ս ստացվեց, որ ընտրակեղծիքների մասին իրավացիորեն շրջանառվող խոսակցությունները մոռացվելու փոխարեն այսօր նորովի մատուցվեցին հասարակությանը:

- Իշխանության 700 հազար «նվիրյալների» համար թույլ տրված կեղծիքների արդյունքն ընդունվեց որպես տոն: Որպես հաղթանակ՝ չգիտես ում նկատմամբ: Արցախի կորուստը, հազարավոր նահատակների արյունը, հաշմանդամների, հանիրավի գերեվարվածների կյանքը, ազգային արժանապատվության նսեմացումը, հրաժարումը մեր խորհրդանիշներից փոխարինվեցին ասֆալտով (կարելի է ենթադրել, թե ուրիշ երկրներում ասֆալտ չի արվում), թոշակների հարկադրական, երեւութական բարձրացումով: Իշխանության «նվիրյալն» այդպես էլ «չլսեց» ու «չտեսավ», որ, ասենք, երիտասարդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը կառավարող անձի համար հայրենասիրությունը... փուչիկ է (ընդ որում՝ վտանգավոր փուչիկ. չլինի թե երեխաները հրապուրվեն): Նույն ղեկավարի համար Նժդեհի գաղափարախոսությունը՝ ոչ ավել, ոչ պակաս, ֆաշիստական է, եւ նրանով պետք չէ թշնամուն գրգռել:

- Ինչպե՞ս ստացվեց, որ մեր կյանքի անհանգիստ ռիթմը դրական փոփոխություն չկրեց:

- Ընտրություններին մասնակից կուսակցությունների ստացած քվեների թվաբանությունն ինքնին հուշող է. միանիշ, երկնիշ, եռանիշ թվերը, իմի գալու փոխարեն, «մոգական» ուժով տեղաշարժվեցին, փոխեցին իրենց տեղերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ ըստ իշխանությունների նպատակահարմարության: Դա չվրիպեց անգամ եվրոպական դիտորդների աչքից: Այո, ընտրություններում թերացումների, սխալների չափաբաժինն այնքան մեծ է, որ իշխանությունների հաղթանակին շահագրգիռ եվրոպական դիտորդները չկարողացան աչք փակել ու չարձանագրել աղաղակող թերություններ: Թեեւ այդ արձանագրություններն առոչինչ են, քանի որ դիտորդներին գործուղած ղեկավարները չհապաղեցին շնորհավորանքի ուղերձներ հղել իշխանություններին: Ուղերձներ, որոնք նախորդեցին ընտրությունների արդյունքների ամփոփմանը: Եվրոպայի համար այդպես ցանկալի է, քանզի ժողովրդավարության բաստիոն հորջորջվող Հայաստանը դիտարկվում է որպես տարածք, որտեղ կարելի է այլազգիներից բեռնաթափել աշխարհամասի ժողովրդագրությանը սպառնացող ներկայիս ծանրաբեռնվածությունը:

- Ընտրություններն ավարտվեցին: Իսկ որո՞նք են լինելու իշխանության եւ ընդդիմության հետագա քայլերը:

- Նախ ասեմ, որ ընտրությունները բացահայտեցին մինչ այդ երկրի էլեկտորատի մասին եղած թերահավատության սնանկությունը: Քարոզարշավին ի հայտ եկան հին ու նոր դեմքեր՝ Նարեկ Կարապետյան («Ուժեղ Հայաստան»), Արման Թաթոյան («Միասնության թեւեր»), Էդմոն Մարուքյան («Լուսավոր Հայաստան»), Լեւոն Զուրաբյան (ՀԱԿ), ովքեր առանձնացան հասարակական կյանքը բարեփոխելու եւ առաջնորդելու հետաքրքիր եւ ուշագրավ օրակարգերով: Այսուհանդերձ, ընտրություններից հետո էլ գլխավորը՝ անվտանգության հարցը, այդպես էլ մնաց առկախված: Ինչո՞ւ: Ստիպված եմ կրկնել. իշխանության ավելի քան 700 հազար երկրպագուներին այդպես էլ հասու չեղավ եւ չհետաքրքրեց, թե ինչ շահերով են առաջնորդվում ԱՄՆ-ն, Եվրոպան եւ, իհարկե, Թուրքիան ու Ադրբեջանը: Ինչո՞ւ են շահագրգռված ներկայիս իշխանության վերարտադրությամբ: Երկրի անվտանգությունը կմնա վտանգված, չհոգնենք կրկնելուց, քանի դեռ ասֆալտն ու թոշակն ընտրողի համար կմնան գերակա շահ: Քանի դեռ Հայաստանի պաշտպանության բանակի շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Էդ. Ասրյանը Գեղարքունիքում թշնամու ստորաբաժանումների դիրքերի տեղաշարժին եւ ամրաշինական աշխատանքներին վերաբերող հարցին ի պատասխան միտք կհայտնի, թե այդ մասին իրենք զգուշացրել, ահազանգել են: Հստակեցնելու նպատակով շտաբի պետին հարցնենք՝ ո՞ւմ են զգուշացրել ու ահազանգել: Թերեւս կարելի է ենթադրել՝ Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը» գրքում Հուիհնհնմներ անվանյալ երկրի ղեկավարի՞ն: Միայն չմոռանանք, որ երկրի անվտանգության եւ մեր սահմանների պահպանության պատասխանատուն իր գլխավորած կառույցն է: Երկրի անվտանգությունը վտանգի տակ է, քանի դեռ Արեւմտյան Ադրբեջանի մասին խոսույթն առարկայական է եւ ոչ մտացածին: Քանի դեռ երկրի բնակչությանը լուրջ ասելիքի փոխարեն ընտրություններից հետո անգամ ընդդիմադիրների հանդեպ շարունակվում են բռնությունները, սպառնալիքները: Լրագրողների հետ վերջին ասուլիսում վարչապետի հնչեցրած հոխորտանքներն ընդդիմադիր առաջնորդների, իրավապահ համակարգի եւ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների նկատմամբ ապացույցն է այն բանի, որ հասարակության մեջ համերաշխության մթնոլորտ ձեւավորելու ցանկությունն ու կամքը դեռեւս բացակայում են: Տարօրինակ մի զուգադիպությամբ՝ ասես վերադարձել ենք ստալինյան ժամանակներ: Դպրոցական երեխաներ էինք: Խաղի ժամանակ արտասովոր հագուկապով մեկին տեսնելիս շնչակտուր վազում էինք ընկերների մոտ.

- Լրտես եմ տեսել:

Երեխաներիս, բացառված չէր՝ նաեւ մեծահասակների համար երկրում վխտում էին լրտեսները: Նույնը՝ այսօր, ամեն քայլափոխի, ամեն խոսքի ետեւում Կրեմլն է, Կրեմլի գործակալները, կաշառատուներն ու կաշառակերները: Իսկ Եվրոպայում դրախտն է: Այս ամենը մեր այսօրվա կյանքն է, ու որեւէ ակնկալիք չկա, թե բացթողումներից, թերացումներից հետեւություններ կարվեն: Իմ կարծիքով, այնուամենայնիվ, չպետք է հուսահատվել ոչնչից: Պայքարը՝ քաղաքական, իրավական հարթություններում, թե փողոցում, պետք է շարունակել: Ասել է՝ արդարության հասնելու ընթացքը պիտի դառնա անկասելի:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 13.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՐԵՎԵԼՔԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Արեւելքի հարուստ պատմությունը, հին քաղաքակրթությունները, անսովոր ավանդությունները, փիլիսոփայական ուսմունքները դարեր շարունակ ներշնչել են թե՛ նկարիչներին, թե՛ գրողներին եւ թե՛ ռեժիսորներին: Ու պատահական չէ, որ կինոարվեստում էլ Արեւելքը ներկայացվել է որպես խորհրդավորության, ոգեկան խորության եւ զարմանահրաշ գեղեցկության սիմվոլ: Շատ ֆիլմեր պատմում են Արեւելքի ժողովուրդների, նրանց պատմության, մշակույթի մասին, օգնում են ավելի լավ հասկանալ Արեւելքի նրբությունները: Արեւելքի մասին կինոարվեստում առաջինը արաբական հեքիաթների հիման վրա նկարահանված կինոնկարներն են: Հիասքանչ պալատներ, անապատներ, քարավաններ, արեւելյան շուկաներ, լեգենդար հերոսներ... այս ամենը կինոմեկնաբանության մեջ դառնում է կախարդանք եւ գրավում է կինոդիտողներին: Հատկապես Ալադինի կերպարը, որը բազմաթիվ կինո եւ անիմացիոն մեկնաբանություններով է ներկայացվում:

Արաբական աշխարհից բացի, Արեւելքը համաշխարհային կինոյում հատկապես ներկայացված է Ճապոնիայով: Լեգենդար ռեժիսոր Ակիրա Կուրոսավայի աշխատանքներն ահռելի ազդեցություն են թողել ողջ համաշխարհային կինոյի վրա: «Յոթ սամուրայները», «Արյան մեջ թաթախված գահը» եւ այլ ֆիլմեր բացահայտել են ճապոնական մշակույթը, սամուրայական պատվի կոդեքսը, ավանդական պատկերացումները պարտքի, հավատարմության եւ արդարության մասին: «Յոթ սամուրայները» առհասարակ կինոարվեստի մեծագույն գործերից է, որը ներշնչանքի աղբյուր է դարձել շատ ռեժիսորների համար: Արեւելյան գեղագիտությունը հատկապես առկա է Չժան Իմոուի «Թռչող դաշույնների տունը», «Հերոսը» կինոնկարներում: Սրանք գրավում են ոչ միայն իրենց սյուժեներով, այլ նաեւ՝ վիզուալ գեղեցկությամբ: Յուրաքանչյուր կադր հիացնում է, ավանդական կոստյումներն ու ճարտարապետությունը, բնական լանդշաֆտը ընդգծում են չինական մշակույթի հարստությունը: Մարտական արվեստներն այստեղ ներկայացված են ոչ միայն որպես մարտ մղելու ձեւեր, այլեւ որպես փիլիսոփայություն եւ հոգեւոր հիմք: Իհարկե, պետք է խոսենք նաեւ հնդկական կինոարվեստի եւ Բոլիվուդի մասին, որը կինոյում յուրահատուկ երեւույթ է: Երաժշտություն, պարեր, երգեր, սոցիալական թեմաների արծարծում, չարի եւ բարու պայքար, բարու հաղթանակ: Ի լրումն դրա՝ ավանդական կոստյումներ, միջավայր, երաժշտություն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am